Besides according to the Law of RA on “Expropriation of Property for the State and Public Needs” the owner of the expropriated property, or those who have property rights towards the expropriated property have the right to present in due form written objections or proposals concerning the draft expropriation agreement, while the entity acquiring the property in order to sign the agreement has a right to negotiate with the owner of the expropriated property or with those who have the property rights towards the expropriated property. However, those who acquire the property according to those who make the complaints, do not accept the complaints addressed to them and refuse to conduct negotiations concerning the price of the compensation, stating that they are simply constructors.

The role of the state is limited to only to acknowledging the exclusive prevailing public interest towards the space, while the fulfilment of obligations towards the owners of the property in the expropriated areas is left completely to the organizations that acquire the property, and the state does not bear any responsibility for their activities and does not control further process in any form.

In principle the only possible way for the existence and the development of the society is a match and correspondence between the public and private interests. However in reality we notice that finding the balance between those two is quite difficult, and usually the society turns either to one or to the other.

Conclusion and Recommendations

- In order to avoid big social shocks resulting from the expropriation process the RA Government needs to understand that the basis of the institution of expropriation is considering the public interests above the personal ones. The society does not exist on its own, it exists for the individuals, who make its constituency. The living conditions in the society need to be comfortable and favorable for each member of the society, therefore the public interest is the composition of individual interests of the members of the society. However, sometimes the individual interests contradict each other and may also contradict to the public interest. This results in the general rule, that in case of the conflict between the public and private interests, the latter as the least important ones are neglected in favor of the public interest. Unfortunately this rule does not regulate all the disagreements. It is evident that the only way for the existence and the development of the society is the correspondence and the agreement between the public and private interests.
- As expropriation is a new phenomenon in our country and is now in the stage of development and stabilization, it was proposed to use the experience and achievements of developed countries in the field of expropriation.
- In case of application of expropriation it is necessary that the aims of expropriation are decided not through a special law, but rather that issue is widely and publicly discussed in order to understand if the application of the expropriation is in the public interest and what is that prevailing public interest.
- The state needs to be inclined to implement legal changes so that the expropriation process is as justified as possible.

- While determining the amount of compensation for the expropriated property together with applying the market value it is important to take into consideration also other criteria. For example the possibility of providing similar conditions for the owner in another place.
- The law needs to specify the terms and conditions of defining the market value. As in any case the valuation of the real property will be implemented by a licensed valuator, and the license has been provided by a state institution, it will be more correct if the owner of the real property has a right to invite the valuator, while the state will bear the costs of the valuation.
- It is the state that bears the public and state needs and not the community or any other organization. The state can entrust the implementation of that objective to some agency or even to an individual, who cannot be participants of the process of the expropriation of the property. The rights of the owner of the expropriated property and others who have property rights cannot be properly protected, if the state is not the party of the expropriation agreement.

DISSEMINATION

An announcement was made about the tenth roundtable discussion and the results were also disseminated through ASUE official web-page and Facebook:

- Coverage of the tenth roundtable discussion: <http://www.asue.am/en/media/news-143/judicial-processes-discussion-of-issues-of-public-confidence-in-asue-2139>
- Facebook: https://www.facebook.com/permalink.php?story_fbid=940246796032128&id=243586022364879



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra



ARMENIAN STATE
UNIVERSITY OF
ECONOMICS

**Swiss Cooperation Office
South Caucasus**

Հայաստանում ներառական աճի խթանման քննարկումների հարթակի ստեղծում

Կլոր սեղան-քննարկումների նյութերի ժողովածու

Երևան, 2016

Երախտիքի խոսք

Շնորհակալություն ենք հայտնում Հարավային Կովկասում Շվեյցարիայի Համագործակցության գրասենյակի ղեկավարությանը և անձնակազմին՝ ծրագրի իրականացման ֆինանսական, վարչական, տեխնիկական և բովանդակային աջակցության համար:

Երախտապարտ ենք ծրագրի կառավարման խորհրդին՝ համագործակցության և գիտելիքի փոխանցման համար:

Խորին շնորհակալություն ենք հայտնում ՀՊՏՀ և հրավիրված փորձագետներին, հետազոտողներին և կլոր սեղան-քննարկումների մասնակիցներին՝ ծրագրի իրականացմանը տրամադրած ժամանակի և խորհրդատվության համար:

Շնորհակալ ենք ՀՊՏՀ ղեկավարությանը և գործընկերներին՝ աջակցության և գործակցության համար, առանց որի անհնար կլիներ իրականացնել ծրագիրը:

Երախտապարտ ենք Հարավային Կովկասում Շվեյցարիայի Համագործակցության Հայաստանյան գրասենյակի ղեկավար Զառա Ալլահվերդյանին՝ ծրագրի հաջող իրականացման նպատակով ցուցաբերած ամենօրյա աջակցության համար:

«Հայաստանում ներառական աճի խթանման քննարկումների հարթակի ստեղծում» ծրագրի իրականացման ՀՊՏՀ աշխատակազմի անունից՝

Ներսես Գևորգյան

Պարույր Քալանթարյան

Ծրագրի տնօրեն

Ծրագրի հետազոտության տնօրեն

Նախարան

Հայաստանի Կառավարությանը և ոլորտային պատասխանատու շահակիցներին աջակցելու նպատակով, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը Հարավային Կովկասում Շվեյցարական Համագործակցության Գրասենյակի աջակցությամբ է «Հայաստանում ներառական աճի խթանման քննարկումների հարթակի ստեղծում» ծրագիրը: ՀՊՏՀ-ն կազմակերպել է կլոր սեղան-հանրային քննարկումներ, կիզակետում տեղադրելով աշխատատեղերի ստեղծման օրակարգը, որը կնպաստի ներառական տնտեսության և սոցիալական արդար հասարակության կառուցմանը, աղքատության նվազմանը և բարեկեցության համահարթեցմանը:

Կլոր սեղան քննարկումների առանցքային թեմաները առնչվել են ներառական աճ ապահովող, որակյալ աշխատատեղերի ստեղծմանը և տնտեսական առաջընթացին նպաստող ոլորտներին: Շահակիցների լայն լսարան ապահովելու նպատակով կազմակերպվել են բաց դասախոսություններ և հեռուստատեսային քննարկումներ:

Ծրագրի շրջանակներում ՀՊՏՀ-ում իրականացվեցին լայն քննարկումներ ոլորտային քաղաքականությունների իրացման ուղիների դիտարկմամբ, խորացվեց կապը ոլորտների շահակիցների՝ ակադեմիական շրջանակի, պրակտիկ աշխատողների, քաղաքականության պատասխանատուների միջև: Հետազոտական հենքի վրա ձևավորված վերոնշյալ գործակցությունը կնպաստի ներառական աճի գաղափարախոսության մասին հանրային կարծիքի ձևավորմանը և դրա կիրառման գիտելիքով և հմտություններով օժտված խմբերի ձևավորմանը:

Սույն հրատարակումը ամփոփում է հետազոտական

աշխատանքների վրա հիմնված կլոր սեղան քննարկումների արդյունքը՝ ոլորտային քաղաքականությունները և հասարակության ներառական աճին ուղղված առաջարկները:

Ներսես Գևորգյան

Պարույր Քալանթարյան

Ծրագրի տնօրեն

Ծրագրի հետազոտության տնօրեն

Ծրագիրն իրականացնող հաստատությունը

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (ՀՊՏՀ) հիմնվել է 1930թ.: Այն Հայաստանի ամենախոշոր և առաջատար տնտեսագիտական կրթական հաստատությունն է, և ունի ավելի քան 7000 ուսանող:

Համալսարանում գործում են 6 ֆակուլտետ, 25 ամբիոն, հաստատված են բարձրագույն մասնագիտական կրթության 79 ծրագրեր, այդ թվում՝ բակալավրի պատրաստման 17 (11 մասնագիտացումներով), մագիստրոսի պատրաստման 17 (34 մասնագիտացումներով): Պրոֆեսորադասախոսական կազմի թիվը 396 է, որից՝ 1 ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, 28 գիտության դոկտոր, պրոֆեսոր, 9 գիտության թեկնածու, պրոֆեսոր, 4 գիտության դոկտոր, դոցենտ, 159 գիտության թեկնածու, դոցենտ, 66 գիտության թեկնածու, 12 դոցենտ և 102 հրավիրված անձինք (11-ը՝ Եղեգնաձորի մասնաճյուղում), որոնք հիմնականում պատասխանատու պաշտոններ են զբաղեցնում պետական կառավարման ապարատում, ֆինանսական ու բանկային համակարգերում:

ՀՊՏՀ-ն հիմնել է մասնաճյուղեր նաև Հայաստանի մարզերում՝ Գյումրիում (1997թ.) և Եղեգնաձորում՝ (2008թ.): Ներկայումս ՀՊՏՀ-ն իրականացնում է կրթական ծրագրեր բակալավրի, մագիստրոսի և ասպիրանտուրայի ծրագրերով: Համալսարանը ունեցել է ավելի քան 30,000 բարձրակարգ մասնագետ-չրջանավարտներ: Նրանց մեծամասնությունը այժմ աշխատում է տնտեսության, գիտության, մշակույթի, կրթության և այլ ոլորտներում:

ՀՊՏՀ առաքելությունն է.

ՀՊՏՀ-ն, հիմնվելով ակադեմիական ազատությունների և

ինքնավարության, կրթություն-աշխատաշուկա համագործակցության, ուսանողակենտրոն ուսումնառության և կիրառական գիտելիքի փոխանցման, գիտահետազոտական աշխատանքների վրա, մասնագիտական ներուժի կենտրոնացման և ուսուցանման և ուսումնառության նորարարական միջավայրի ստեղծման միջոցով պատրաստում է մրցունակ, հմտություններով և կարողություններով զինված և ժողովրդավարական քաղաքացիության սկզբունքներով առաջնորդվող մասնագետներ և վերապատրաստում է հասարակության և տնտեսության փոփոխությունները իրականացնող առաջնորդներ՝ ինչպես Հայաստանի, այնպես էլ միջազգային աշխատաշուկայում:

Ծրագրի բովանդակությունը

Ներառական աճին ուղղված ծրագրի իրականացման անհրաժեշտությունը

Հետզհետե Կապիտալի Հայաստանի տնտեսության խոցելիությունը պահանջում է նոր ավելի կայուն մոտեցում տնտեսական զարգացմանը, աճը շեշտադրող մոտեցման փոխարեն փնտրելով ճանապարհներ, որոնք առավել ներառական կլինեն և կբացահայտեն երկրի ներուժը:

Նախաձեռնամային տնտեսական մոդելը (2003-2008) հիմնված էր օտարերկրյա ուղղակի ներդրումների եւ տրանսֆերտների վրա: Բացի այդ, տնտեսական աճը չխթանեց զբաղվածության աճը, քանի որ այն արտադրողականության բարձրացման հաշվին էր արձանագրվում և ընթանում էր կրճատվող զբաղվածության ու ԽՍՀՄ-ից ժառանգած ոլորտների փոխակերպման հաշվին:

Երկրի բնակչության մեկ երրորդը շարունակում է ացքատ լինել, անհավասարության մասին քննարկումները առավել հաճախ են հայտնվում ազգային օրակարգում: Անհավասարության բարձր մակարդակը կարող է հանգեցնել տնտեսական աճի նվազմանը, խաթարելով քաղաքական կայունությունը և, ի վերջո, հանգեցնելով ներպետական և միջպետական հակամարտությունների սրացմանն ու էլ ավելի խորացնել աղքատությունը: Նշվածը կարող է հանգեցնել անկանխատեսելի ծանր սոցիալ-տնտեսական հետեւանքների Հայաստանի համար:

Նպատակ ունենալով բարձրացնել հասարակության բարեկեցությունը, կառավարությունը նպատակադրվել է *որակյալ եւ բարձր արտադրողականությամբ աշխատատեղերի ստեղծման*

միջոցով բարձրացնել զբաղվածության մակարդակը, այդպիսով առաջարկելով շտապ անցում կատարել առաջարկահենք աճի քաղաքականությանը, ինչն էլ ենթադրում է կառուցվածքային բարեփոխումներ: Կառավարության նոր ռազմավարությունը պահանջում է բարեկեցության վերափմաստավորումը, հեռանալով ՀՆԱ-ով բնորոշվող նեղ սահմանումից: Ավելին, այն ենթադրում է ներառականությունը հաշվի առնող զբաղվածության նոր քաղաքականություն, բացառելով անհավասարության վատթարացումը, երբ առավել կրթվածներն ու հարուստները կորզում են հնարավոր առավելագույնը մյուսների հաշվին:

Սահմանափակ ռեսուրսների պայմաններում ներգրավվածության ապահովումն այնպես, որ բնակչության բոլոր հատվածները օգտվելու հնարավորություն ունենան, անհնար կլինե՞ր առանց կայացած կառավարման կառույցների՝ թույլ տալով մասնակցել քաղաքական, տնտեսական եւ սոցիալական ինստիտուտների աշխատանքներին: Ինքնակազմակերպման հնարավորությունները՝ սկսած տեղական ինքնակառավարման կառույցներից, արհեստակցական միություններից, ինչպես նաեւ համալսարաններից, մասնագիտական միավորումներից եւ այլ քաղաքացիական հասարակության առանցքային դերակատարներից, կարող է ժողովրդավարացնել հասարակությունը՝ պահելով արտադրական գործընթացները շահագրգիռ կողմերի հսկողության տակ:

Չնայած նրան, որ Հայաստանի ներկայիս պետական ռազմավարությունը առանձնացնում է մարդկային կապիտալի զարգացումը, սոցիալական պաշտպանության համակարգի բարելավումը, պետական կառավարման համակարգի արդիականացումը աշխատատեղերի ստեղծման գործում, պարզ չէ այդ առաջնահերթությունների համադրումը և մշակվելիք ոլորտային քաղաքականությունները ապահովելու հավասար

հնարավորություններ նոր ստեղծվող աշխատատեղերից օգտվելու իմաստով և որպես ցանկալի արդյունք՝ ապահովելու ներառական աճ և բարեկեցություն:

Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է նպաստել ներառական տնտեսության հիմնմանը և զարգացմանը՝ հանրային մասնագիտական քննարկումների միջոցով շեշտելով սոցիալական հավասարության սկզբունքը, աղքատության նվազեցման ուղիները, աշխատատեղերի ստեղծման և բարեկեցության բաշխման հիմքերը:

Ենթանպատակները.

- Տնտեսության ոլորտային քաղաքականությունների հանրային քննարկումների միջոցով աջակցել սոցիալական հավասարության և ներառական տնտեսական մոդելի վրա հիմնված, գիտելիքահեն հասարակության ստեղծմանը և գործունեությանը:
- Հանրային կարծիքի ձևավորման և ոլորտային քաղաքականությունների կիրառական գործարկման նպատակով, հիմնվելով հետազոտությունների արդյունքների կիրառման վրա, մեկտեղելով ոլորտների շահակիցներին՝ ակադեմիական քննարկումների իրականացում:

Ծրագրի կառուցվածքը

Ծրագիրը կազմելիս շեշտը հիմնականում դրվել է այն ոլորտների վրա, որոնք ունեն հնարավոր խոչընդոտներ որակյալ աշխատատեղեր ունեցող տնտեսական զարգացման իրականացման համար, ներառական տնտեսության հեռանկարների տեսանկյունից վերլուծելով քաղաքականության տարբերակները:

Ներառական աճի տնտեսական մոդելի տեսանկյունից աշխատատեղերի ստեղծմանը նպաստող ոլորտային

քաղաքականությունները հետևյալն են.

- **Արդյունաբերությունը և արտահանման խթանումը՝** ուղղված նոր տնտեսական ոլորտների և ձեռնարկությունների ստեղծմանը, որոնք կդիմակայել արտաքին մրցակցությանը, ինչպես նաև կապահովեն և կընդլայնեն արտահանման հնարավորությունները:
- **Զբոսաշրջության զարգացումը,** սա մի ոլորտ է, որը արդեն հանդիսանում է արտահանման երկրորդ՝ ճյուղը հանքարդյունաբերությունից և մետաղաարդյունաբերությունից հետո և զբաղեցնում է ծառայությունների արտահանման կեսից ավելին:
- **Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը՝** արդեն ապահովել է որակյալ զբաղվածության 38 տոկոս աճ (2008-2011թթ.) և ունի հետազոտության և նորարարության ներուժ:
- **Գյուղատնտեսությունը՝** ոլորտ, որը չնայած ՀՆԱ-ում իր փոքր մասնաբաժնի, զբաղվածությամբ է ապահովում երկրի տնտեսապես ակտիվ բնակչության մեկ երրորդին և հնարավորություն է տալիս երկարացնել զբաղվածության ժամկետը կենսաթոշակի տարիքից հետո:
- **ՓՄՁ-ների գործունեությունը և կայունությունը,** որը կարող է կարևոր աղբյուր դառնալ տնտեսական և արտահանման աճի, ինչպես նաև՝ աշխատատեղերի ստեղծման համար:

1 Զբոսաշրջության կողմից տրամադրվող ծառայությունների հիմնական գնորդները հիմնականում արտասահմանցիներն են, եթե հաշվի չառնել ներքին սպառումը, որի պատճառով այն համարվում է արտահանման ոլորտ, ինչպես դա համարվում է օտարերկրյա համալսարանների ֆինանսավորման դեպքում, ինչպես նաև՝ օտարերկրյա ուսանողների կողմից կրթական ծառայությունների գնման պարագայում:

Տարանցիկ թեմաներ. Փորձելով դուրս գալ արտադրողականության հետ կապված անհավասարության շրջանակից ծրագիրը շեշտը դրեց այն ոլորտների վրա, որոնք կարող են բացահայտել անհավասարությունները այդ ոլորտների հասանելիության առումով՝ սկսած ենթակառուցվածքների և մարդկային կապիտալի զարգացումից, մինչև ֆինանսական միջոցների սակավությունը և ռիսկերի նվազեցումը: Ընտրված ոլորտները ուսումնասիրվել են կրթական հասանելիության, գենդերային դերակատարությունների, ենթակառուցվածքների (ճանապարհներ, տրանսպորտ, ինտերնետ և այլն) և վարկավորման ու հանրային ծառայությունների (կրթություն, սոցիալական ապահովություն, առողջապահություն, արդարադատություն) հասանելիության տեսանկյուններից:

Ավելին՝ սոցիալ-տնտեսական խմբերի վարքագծային և գենդերային խնդիրների մասին իրազեկված ուսումնասիրությունը բացահայտում է սոցիալական ներառականության խոչընդոտները և դրա տնտեսական հետևանքները, և չափազանց օգտակար կլինի այն քաղաքականությունների բարելավման համար, որոնք մշակվում են ընտրված շրջանակում:

Ներառական տնտեսության խնդիրների բացահայտման համար հիմնական տարանցիկ թեմաները, որոնց ուսումնասիրումը հիմք հանդիսացավ կլոր սեղանների քննարկման և ոլորտային քաղաքականությունների տարբերակների մշակման համար հետևյալն են.

1. **Կրթության ոլորտը**
2. **ենթակառուցվածքների** ազդեցություն ներառական աճին
3. Ֆինանսավարկային ոլորտի հասանելիություն գործունեություն
4. **Իրավարարություն և դատախիրավական համակարգ**
5. **Կառավարման** մեխանիզմներ

6. **Գենդերային դերերը և մասնակցությունը** երկրի հասարակական, տնտեսական և քաղաքական կյանքում:

Ծրագրի իրականացումը

Իրականացումը

Առաջնորդվելով Կառավարությանն ու մյուս հիմնական շահակիցներին աջակցելու նպատակադրմամբ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը Շվեյցարիայի համագործակցության գրասենյակի Հարավկովկասյան բաժնի աջակցությամբ մշակել և իրականացրել է կլոր սեղան-քննարկումների շարք:

Քննարկումների կիզակետում եղել են բարձրակարգ աշխատատեղերի միջոցով տնտեսական զարգացմանը միտված քաղաքականությանը խոչընդոտող հարցերը՝ վերլուծելով ներառական տնտեսության տեսանկյունից լավագույն ոլորտային քաղաքական հնարավոր տարբերակները:

Ավելին, քննարկումները անդրադարձել են կրթության, ֆինանսավարկային ոլորտին, տուրիզմի զարգացման, միջնորդության և դատական պրակտիկային, արդյունաբերության ու արտահանման խթանման, ՏՀՏ, գյուղատնտեսության և գյուղական զարգացման, ինչպես նաև ՓՄՁ գործառնության ու կայունության խնդիրներին:

Յուրաքանչյուր կլոր սեղան քննարկման ժամանակ ըստ ընտրված քաղաքական ոլորտի հրավիրվել են համապատասխան շահագրգիռ կողմերը:

Արդյունքները համադրվել և փոխանցվել են հիմնական շահառուներին: Ծրագրի ավարտին, ՀՊՏՀ-ում գործում են ոլորտային քաղաքականությունների հարցերի քննարկման փորձագիտական խմբեր՝ միմյանց հետ կապելով տարբեր շահառուներին և պարբերաբար տրամադրելով կիրառական հետազոտությունների վրա հիմնված խորհրդատվություն:

Հետազոտությունների հիմնական նյութերի ներկայացման և խորացված քննարկման համար առաջարկվել է կլոր սեղան քննարկումների (ԿՍՔ) ձևաչափը: Յուրաքանչյուր ԿՍՔ-ն օրակարգը կազմվել է միջոցառումից առաջ և ուղարկվել է հիմնական շահագրգիռ կողմերին: Յուրաքանչյուր ԿՍՔ-ը հրավիրվել են քննարկման թեմային հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն մասնագետներ՝ հիմնական



քաղաքանություն մշակողներ ճյուղային նախարարություններից, համապատասխան պետական գերատեսչություններից և ազգային հաստատություններից: Հետևյալ ցանցերի շրջանավարտներին՝ CABIR, Fulbright և BAN, համապատասխան կերպով տեղեկացվել են, որպեսզի հայտնեն իրենց հետաքրքրությունը և մասնակցեն քննարկմանը: Ավելին՝ քննարկման թեմայի բնագավառում ներգրավված միջկառավարական կազմակերպությունների համապատասխան գրասենյակներ և ներկայացուցչույններ, օրինակ՝ ՄԱԿ-ի, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Ասիական զարգացման բանկի, Եվրոպական զարգացման բանկի, Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկի, Գերմանիայի միջազգային համագործակցության գործակալության, ինչպես նաև՝ միջազգային ՀԿ-ներ, օրինակ՝ World Vision-ը, Transparency International-ը, Բաց հասարակության

հիմնադրամը տեղական ՀԿ-ների հետ զուգահեռ հրավիրվել են կլոր սեղաններին: Յուրաքանչյուր ԿՍԲ-ան ընթացքում պատշաճ տեղեկատվություն և հրավեր է ուղարկվել հիմնական զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին:

Լուսաբանումը

Ծրագրի արդյունքները համառոտագրվեցին և ներառվեցին սույն հրատարակման մեջ: Քաղաքականության հակիրճ ներկայացումները, հետազոտությունները ուղարկվել են կլոր-սեղան քննարկումների մասնակիցներին և հիմնական շահակիցներին:

Ծրագրի արդյունքների վերաբերյալ կազմակերպվել են երկու հեռուստաքննարկում և մեկ անփոփ ներկայացում:

Ծրագրի ընթացքում կլոր սեղան քննարկումներին հրավիրվել են ԶԼՄՆ ներկայացուցիչներ, ապահովելով ծրագրի արդյունքների լուսաբանումը հեռուստատեսությամբ և մամուլով:

ՀՊՏՀ էլեկտրոնային կայքում հատուկ տեղ է հատկացվել ծրագրի տեղեկատվության համար:

Կլոր սեղանների թեմատիկ քննարկումները հիմնվել են ընտրված տաս ոլորտների վրա.

1. Պետական կառավարում. «Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում»
2. Գենդերային դերեր և մասնակցություն. «Աշխատանքի շուկայում կանանց մասնակցության գենդերային խնդիրները. կարծրատիպացումը որպես ներառական աճը սահմանափակող գործոն»
3. Կրթություն. «Շահակիցների պահանջմունքներին ուսումնառության վերջնարդյունքների համապատասխանության խնդիրները»

4. ՓՄՁ գործունեություն և կայունություն. «Փոքր և միջին ձեռնարկությունների դերը տնտեսական զարգացման համատեքստում»
5. Ֆինանսական հատված. «Ֆինանսական համակարգի դերը ներառական աճի խթանման գործընթացում»
6. Գյուղատնտեսություն և գյուղական զարգացում. «ՀՀ ագրարային քաղաքականությունը և միջազգային համագործակցությունը»
7. Զբոսաշրջություն. «Զբոսաշրջության արդյունաբերությունը ՀՀ-ում. զարգացման հեռանկարները և այլընտրանքային լուծումները»
8. ՏՏ ոլորտի զարգացում. «ՏՏ ոլորտի ազդեցությունը Հայաստանի ներառական աճի վրա. խոչընդոտներ և մարտահրավերներ»
9. Արդյունաբերության և արտահանման խթանում. «Մրցակցային միջավայրի, արտահանման և ներմուծման ազդեցությունը ՀՀ տնտեսության ներառական աճի վրա»
10. Դատաիրավական համակարգ. «Դատաիրավական գործընթացներ և հանրային վստահություն»:



I կլոր սեղան

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում

Մարտի 5, 2014թ.

Հիմնական բանախոսներ.

Վաչե Տերտերյան, գիտությունների թեկնածու,
Տարածքային կառավարման նախարարի տեղակալ
Յուրի Սուվարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության
դոկտոր, պրոֆեսոր ՀՊՏՀ Կառավարման ամբիոնի վարիչ
Ռուբեն Հայրապետյան, տնտեսագիտության դոկտոր,
ՀՊՏՀ Կառավարման ամբիոն

Առաջին կլոր սեղան քննարկումը նվիրված էր Հայաստանում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման խնդիրներին: Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց համայնքների կայուն զարգացման հարցերին, քննարկվեցին տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման ներկայացված մոդելները:

Կլոր սեղանին մասնակցելու հրավերներ էին ուղարկվել

հիմնական շահագրգիռ կողմերին՝ քննարկելու բանախոսների կողմից առաջարկված վարչատարածքային բարեփոխումների երկու մոդելները: Քննարկմանը մասնակցում էին հետազոտողներ, փորձագետներ, քաղաքականություն մշակողներ, դասախոսներ և ուսանողներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Քննարկվեցին երկու մոդելներ՝ մեկը մշակվել էր հետազոտողների կողմից, մյուսը՝ առաջարկվել է Հայաստանի Կառավարության կողմից: Այն մասնակիցները, ովքեր պատասխանատու են տարածքային և տեղական կառավարման բնագավառում քաղաքականության մշակման համար, բարձր գնահատեցին հետազոտողների կողմից առաջարկած մոդելը և լավ հիմք համարեցին այն հետագա քաղաքականությունը մշակելու համար:

Քաղաքականության հակիրճ ներկայացում

Պետական կառավարման արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է իշխանության ճյուղերի միջև լիազորությունների և գործառույթների օպտիմալ բաշխմամբ, որը թույլ կտա ապահովել դրանց միջև համակարգման և վերահսկողության համապատասխան մեխանիզմներ: Միաժամանակ կենտրոնական և տեղական իշխանությունների գործունեության արդյունավետության վրա մեծ ազդեցություն ունեն ներքին և արտաքին միջավայրի չափազանց հարափոխ և փոխկապակցված գործոնները՝ տնտեսական իրավիճակը, քաղաքական կայունությունը, կամ միջազգային հարաբերությունները:

Նման հանգամանքներում անհրաժեշտ է դառնում մշտադիտարկում իրականացնել և գնահատել պետական կառավարման և տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման արդյունավետությունը, և անհրաժեշտության դեպքում՝ իրականացնել համակարգի բարեփոխումներ:

Ներկայիս քաղաքականության հեղինակները նպատակ են դրել գնահատել տարածքային կառավարման արդյունավետությունը և բացահայտել լուծում պահանջող խնդիրները՝ հանրային կառավարման հայեցակարգային հետագա արդյունավետ զարգացման նպատակով:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են միջհամայնքային կապերի և համագործակցության խնդիրները, խոշորացման քաղաքականությունները, ինչպես նաև՝ տեղական ինքնակառավարման գործընթացում քաղաքացիների ուղղակի մասնակցության հնարավորությունները և խոչընդոտները:

Հանրային կառավարման համակարգի շրջանակում եկամուտների բաշխումը և վերաբաշխումը կարևոր խնդիր է հանդիսանում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման գործուն համակարգ ձևավորելու համար, որտեղ տեղական ինքնակառավարման բոլոր մարմինները ֆինանսապես և մասնագիտորեն ի վիճակի կլինեն արդյունավետ իրականացնել իրենց գործառույթները:

Տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացման գործում պետք է ներառվեն տարբեր հարցեր: Պետական (կենտրոնական) կառավարման մարմինները այս գործընթացում հիմնական և վճռորոշ դեր ունեն: Իշխանության ապակենտրոնացմամբ և մոտեցնելով դա մարդկանց՝ պետությունը պետք է ապահովի համապատասխան կարողություններ այդ իշխանության կիրառման համար:

Քաղաքապետարանների և գյուղապետարանների մեծամասնության ֆինանսական և մարդկային ռեսուրսները թույլ չեն տալիս լիարժեք հանրային ծառայություններ իրականացնել: Միջհամայնքային համագործակցությունը անհրաժեշտ է դառնում ջրամատակարարման, էներգամատակարարման, աղբահանության,

աղբի վերամշակման, տեղական բյուջեի համար հարկերի հավաքման և այլ խնդիրների համար:

Նման համագործակցությունը նախ և առաջ կարևորվում է մեկուսացումից խուսափելու և կառավարման արդյունավետությունը բարձրացնելու առումով: Շատ դեպքերում տեղերում առկա է կառավարման և մասնագիտական փորձի պակաս: Կան նաև որակյալ մասնագետների ընդգրկման խնդիրներ: ՀՀ օրենքը տեղական ինքնակառավարման մասին թույլ է տալիս ստեղծել միջհամայնքային միավորումներ, սակայն դեռևս նման չեն արձանագրվել:

Համայնքների խոշորացման չափորոշիչները

1. Միացվող համայնքների ընդհանուր վարչական սահմանի առկայություն,
2. Նոր ձևավորվող համայնքի կենտրոնը, որպես կանոն, պետք է ունենա միացվող համայնքների նկատմամբ կենտրոնական դիրք, առնվազն 3000 բնակիչ և անհրաժեշտ նվազագույն ծավալի ենթակառուցվածքներ,
3. Նոր ձևավորվող համայնքի բնակավայրերի հեռավորությունը համայնքի կենտրոնից պետք է լինի որպես կանոն, չպետք է գերազանցի 20 կմ-ը,
4. Նոր ձևավորվող համայնքում պետք է առկա լինեն ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ նվազագույն ենթակառուցվածքներ (մանկապարտեզ, բուժ. կետ, մշակույթի տուն/ակումբ) և միջնակարգ դպրոց,
5. Նոր ձևավորվող համայնքի բնակավայրերի միջև հասարակական տրանսպորտային հաղորդակցություն

ապահովող ճանապարհների (առնվազն խճապատ) առկայություն,

6. Նոր ձևավորվող համայնքի բնակավայրերի նախկինում համատեղ կառավարման մարմնի առկայություն (գյուղխորհուրդ, ավանային խորհուրդ, քաղխորհուրդ),
7. Նոր ձևավորվող համայնքի բնակավայրերի բնակիչների համատեղելիություն և մենթալություն: Ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքները կարող են խոշորացվել միայն առավելապես նույն ազգի ներկայացուցիչներով բնակեցված համայնքների հետ:

Միջհամայնքային համագործակցությունը վերաբերում է երկու կամ ավելի հարևան համայնքների կողմից համատեղ գործունեությանը, համայնքային վարչական խնդիրների, համայնքային ծառայությունների և տարածքային՝ տեղական զարգացման ոլորտներում, որը հնարավորություն է ընձեռում այդ գործընթացներն իրականացնել ավելի արդյունավետ, քան համայնքները դա կանեին ինքնուրույն:

Միջհամայնքային միավորումների ներդրման արդյունքում փաստացի ձևավորվում են տեղական ինքնակառավարման **երկրորդ մակարդակին բնորոշ խոշորացված միավորները:**

Այսպիսով՝ միջհամայնքային միավորումների ստեղծման և գործունեության երկու խոչընդոտները հետևյալն են՝ ֆինանսական միջոցների բացակայությունն է և օրենսդրական բացերը:

Միջհամայնքային միավորումները պետք է նաև ուղեցույց ծառայեն հետագա վարչատարածքային բարեփոխումների համար, որը ի վերջո կհանգեցնի համայնքապետարանների վարչական գործառույթների ընդլայնմանը:

Քննարկման ընթացքում մատնանշվեցին են հետևյալ հարցերը և խնդիրները.

- Երկրի վարչական և տարածքային բաժանման բարեփոխումները ուղղորդվում են ելնելով երկրի համայնքային կառուցվածքից: Հետևաբար տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ամրապնդումը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում միայն ժամանակի խնդիր է:
- Համայնքները, որպես տեղական իշխանության միավորներ, շարունակում են մնալ չափազանց փոքր և կարողություններով թույլ: Չեն ստեղծվել միջհամայնքային միավորումներ:
- Համայնքների ինքնավարությունը և ֆինանսական անկախությունը շարունակում է մնալ չափազանց ցածր մակարդակի վրա:
- Չնայած օրենսդրությունը նախատեսում է համախմբված և համայնքային բյուջեների միջև հարկերը բաշխելու հնարավորությունը, սակայն դեռևս չկա եկամուտների վերաբաշխում:
- Չափազանց կարևոր է բարձրացնել բնակչության իրազեկությունը տեղական ֆինանսական և այլ կառավարչական հարցերի նկատմամբ: Մասնավորապես տեղական բյուջեների մասին անհրաժեշտ է տեղեկացնել բնակչությանը և գործընթացը հրապարակայնացնել:
- Համայնքային բյուջեների բաժինը համախմբված բյուջեի մեջ փոքր մաս է կազմում:

Եզրակացություն և առաջարկություններ

- Հայաստանում տեղական ինքնակառավարման համա-

կարգի հետագա զարգացումը հնարավոր է երկաստիճան տեղական կառավարման համակարգի ստեղծման միջոցով՝ երկու աստիճանների միջև իշխանության և միջոցների համապատասխան բաշխումով:

- Հայաստանի նոր վարչատարածքային բաժանումը արդյունավետ կառավարման նպատակով պետք է ներառի 20 «գավառ» և 3 «հատուկ գոտի»:
- **Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ**

Առաջարկվում է խնդրի լուծման երկու տարբերակ՝

1. վարչատարածքային համակարգի վերակազմակերպմամբ համայնքների խոշորացումը, այսինքն՝ համայնքների միավորումը,
 2. միջհամայնքային համագործակցության ինստիտուտի ներդրումը, որը թույլ է տալիս լիազորությունները պահպանելով համայնքային մակարդակում ապահովել դրանց արդյունավետ իրականացումը:
- **Համայնքների խոշորացման տարբերակների ընտրության հարցում համայնքային կենտրոնի ընտրությունը**

Դիտարկվում է երեք հիմնական տարբերակ.

1. համայնքային կենտրոն դարձնել առավել մեծ թվով բնակիչ ունեցող բնակավայրը,
2. համայնքի կենտրոն դարձնել բոլոր բնակավայրերի համեմատ կենտրոնական դիրք ունեցող բնակավայրը,
3. համայնքային կենտրոն դարձնել այն բնակավայրը, որը հանդիսանում է տրասպորտային հանգույց և կապում է մյուս բնակավայրերը հիմնական ճանապարհների հետ:

ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

1-ին կլոր սեղան-քննարկման վերաբերյալ տրվել է հայտարարություն, և արդյունքները լուսաբանվել են ՀՊՏՀ-ի պաշտոնական ինտերնետային կայքի և ֆեյսբուքի միջոցով՝

- ՀՊՏՀ պաշտոնական կայք՝ <http://www.asue.am/en/media/news-143/round-table-discussion-at-asue-problems-of-inclusive-economy-photos-1426>
- Ֆեյսբուք՝ <https://www.facebook.com/243586022364879/photos/a.244663185590496.59504.243586022364879/653678651355612/?type=3&theater>



II կլոր սեղան

Աշխատանքի շուկայում կանանց մասնակցության գենդերային խնդիրները. կարծրատիպացումը որպես ներառական աճը սահմանափակող գործոն

Ապրիլի 17, 2014թ.

Հիմնական բանախոսներ.

Հեղինե Մանասյան, տնտեսագիտության դոկտոր,
Կովկասյան հետազոտական ռեսուրս կենտրոնի տնօրեն
Ռուզաննա Ծատուրյան, գիտությունների թեկնածու,
Գիտությունների ազգային ակադեմիայի Էթնոլոգիայի
ինստիտուտի հետազոտող

«Աշխատանքի շուկայում կանանց մասնակցության գենդերային խնդիրները. կարծրատիպացումը որպես ներառական աճը սահմանափակող գործոն» թեմայով, երկրորդ կլոր սեղան-քննարկումը նվիրված էր գենդերային խտրականության հիման վրա աշխատաշուկայի սահմանափակումների խնդիրներին: Կարծրատիպերը և ընկալումների հիման վրա դերերի մոդելավորումը՝ այլ խտրականության դրսևորումների հետ համատեղ սահմանափակում է կանանց մասնակցությունը Հայաստանում երկրորդ և երրորդ մակարդակների կրթությանը:

Այսպիսով՝ կրթության որակի բարելավումը և գենդերային անհավասարության նվազեցումը անհրաժեշտ են արդյունավետության բարձրացման և գոյություն ունեցող աշխատավարձի տարբերությունների վերացման համար: Կարծես թե Հայաստանում՝ ի տարբերություն շատ այլ երկրների, չկա շատ մեծ գենդերային տարբերություն նախնական և միջնակարգ կրթության համակարգերում ներգրավվածության առումով՝ զուգահեռ մաթեմատիկական առարկաներում աղջիկների ավելի բարձր առաջադիմությամբ՝ համեմատած տղաների հետ, սակայն Հայաստանում կանայք ավելի քիչ աշխատանքի հնարավորություններ ունեն և ավելի մեծ է նրանց գործազրկության վտանգը: Երկու հիմնական բանախոսները իրենց ուշադրությունը կենտրոնացրեցին այս խնդիրների վրա, փորձելով անդրադառնալ դրանց և ներկայացրեցին՝ (ա) Հայաստանի կանանց միջև զբաղվածության և աշխատավարձի տարբերությունները և (բ) Գենդերային կարծրատիպերը Հայաստանի կրթական համակարգի բովանդակության և մանկավարժական պրակտիկայում:

Քննարկմանը ակտիվորեն մասնակցեցին միջազգային կազմակերպությունները և ՀԿ-ները ներկայացնող շահագրգիռ կողմեր, գենդերային ուսումնասիրություններ կատարող հետազոտողներ, ինչպես նաև ուսանողներ:

Քաղաքականության հակիրճ ներկայացում

Գենդերային հավասարությունն ավելին է քան միայն կանանց վերաբերող հարց լինելը, այն խելամիտ տնտեսության առհավատչյան է: Գենդերային առավել մեծ հավասարության դեպքում խթանվում է արդյունավետությունն, իսկ տնտեսական զարգացումն առավել լավ արդյունքներ է արձանագրում:

Ըստ Համաշխարհային բանկի տվյալների, կանայք աշխարհի

մասշտաբով ընդհանուր զբաղվածության 40 տոկոսն են կազմում, գյուղատնտեսականի՝ 43 տոկոսը և բոլոր ուսանողների կեսից ավելին: Կանանց նկատմամբ խտրական մոտեցումների արդյունքում առաջացած խոչնդոտների վերացման պայմաններում մասնագիտությունների և զբաղվածության ճիշտ ընտրությունը կարող է հանգեցնել մինչև 25 տոկոս աշխատանքային արդյունավետության բարձրացմանը:

Կարծրատիպայնացումն ու ընկալումներով պայմանավորված օրինակելի վարքի պարտադրումն այլ խտրական դրսևորումների թվում, սահմանափակում է կանանց լիարժեք մասնակցությունը կրթության տարբեր մակարդակներում: Հետևաբար, կրթության բարելավումն ու գենդերային անհավասարակշռության վերանայումը կարող են առանցքային դերակատարություն ունենալ արդյունավետության բարձրացման ու աշխատավարձի ճեղքվածքի վերցման գործում: Թվում է, թե ի տարբերություն այլ երկրների Հայաստանում գենդերային խտրականությունը հաղթահարված խնդիր է, քանի որ այս դեպքում կրթական համակարգում թվային իմաստով ներգրավվածությունը աղջիկների օգտին է: Բացի այդ, ի տարբերություն այլ երկրների Հայաստանում աղջիկները մաթեմատիկայի թեստերից առավել լավ արդյունքներ են գրանցում քան տղաները: Բայց և այնպես, տարօրինակ է, որ Հայաստանում կանայք աշխատանքի շուկայում ավելի քիչ հնարավորություններ ունեն քան տղամարդիկ և որպես կանոն գործազրկության իմաստով առավել ռիսկային խմբի մաս են կազմում:

Աշխատանքի շուկայում կանանց առավել ներգրավածությունն ու հավասար հնարավորությունների ապահովումը կարևորվում է նաև ժողովրդագրական մարտահրավերների տեսանկյունից: Հարկավոր է միջոցառումներ ձեռնարկել կանանց ներգրավելու աշխատանքի շուկայում: Ըստ Համաշխարհային բանկի՝

Հայաստանում երիտասարդ կանանց շրջանում գործազրկության մակարդակը կազմում է 69 տոկոս, մինչդեռ այդ ցուցանիշը երիտասարդ տղաների դեպքում 47 տոկոս է: Չնայած ընդհանուր առմամբ կանանց աշխատանքի շուկային ներգրավվածության մակարդակը բացարձակ իմաստով մեծացել է, այնուամենայնիվ տղամարդկանց ու կանանց աշխատավարձի ճեղքվածքը մեծացել է՝ վերջին տաս տարիների ընթացքում 26 տոկոսից հասնելով 45 տոկոսի: Սա կարող է մատնանշել խտրական դեպքերի առկայության և առկա կապիտալի թերօգտագործման մասին, որը չի ապահովում արդյունավետության բարձրացում և ներառական աճի խթանում:

Սահմանափակ ռեսուրսների պայմաններում ներգրավվածության ապահովումն այնպես, որ բնակչության բոլոր հատվածները օգտվելու հնարավորություն ունենան, անհնար կլիներ առանց կանանց և տղամարդկանց քաղաքական, տնտեսական եւ սոցիալական ինստիտուտների աշխատանքներին հավասար մասնակցության:

Չնայած դրան, որ ներկայիս ռազմավարությունը առանձնացնում է մարդկային կապիտալի զարգացումը, սոցիալական պաշտպանության համակարգի բարելավումը, պետական կառավարման համակարգի արդիականացումը աշխատատեղերի ստեղծման գործում, պարզ չէ, թե ինչպես է այդ առաջնահերթությունների համադրումը ապահովելու ներառական աճ և բարեկեցություն: Դեռևս պարզ չէ, թե ինչպես են մշակվելիք ոլորտային քաղաքականությունները ապահովելու հավասար հնարավորություններ կանանց և տղամարդկանց համար այդ նոր ստեղծվող աշխատատեղերից օգտվելու իմաստով:

Եզրակացություն և առաջարկություններ

- Անհրաժեշտ է մեծացնել քաղաքական գործընթացներում կանանց մասնակցության աստիճանը:
- Կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունների նվազեցման, հասարակական, տնտեսական, քաղաքական մասնակցության մեծացման համար կրթական բովանդակությունն ունի ինդիկատիվ և իմպերատիվ-նորմավորող բնույթ, և ցանկալի է, որ պետական կազմակերպությունները ուշադրություն դարձնեն այդ հատվածին՝ հաշվի առնելով, որ խտրական վարքագծի սաղմերը վաղ մանկությունից են սկիզբ առնում:
- Առաջարկվում է միջազգային կառույցներին գենդերային հավասարության ծրագրերում ներառել աջակցության այնպիսի նախաձեռնություններ, որոնք թույլ կտան հասարակական կազմակերպություններին ու հետազոտական կառույցներին պարբերաբար հետազոտել կրթության բովանդակությունն ու տրամադրել առկա իրավիճակի մասին տեղեկատվություն:
- Միջազգային կառույցները կարող են պետական մարմինների հետ համատեղ նախագծեր իրականացնելիս նաև բանակցել ոլորտային քաղաքականության համապատասխան շտկումների անհրաժեշտության վերաբերյալ:
- Դասագրքերի բովանդակության կարծրատիպային շեղումները զուգադրվում են ուսուցիչների խտրական վերաբերմունքով, որին հարկավոր է պատշաճ ուշադրություն դարձնել, քանի որ ուսուցիչների վերաբերմունքը աղջիկների նկատմամբ որպես կանոն ավելի բացասական ու սահմանափակող է: ՀՀ ԿԱԻ-

ին կարող է համալսարանների և այլ կառույցների, հետազոտական խմբերի հետ գործակցելով նախաձեռնել դպրոցներում ուսուցիչների վարքագծային ուսումնասիրություններ, որոնք միտված են բացահայտելու ըստ սեռերի տարբեր կարծրատիպայնացնող մտավոր ու վարքագծային սխեմաները:

- Հայաստանը վավերացրել է ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ բոլոր տեսակի խտրականությունների դեմ միջազգայնագիրը, որը պահանջում է տարեկան զեկույցների տրամադրում համապատասխան քարտուղարությանը: ՀՀ Կառավարությունը ներկայացնում է պաշտոնական զեկույցը, իսկ տարբեր հասարակական կազմակերպություններ էլ կարող են տրամադրել իրենց այլընտրանքային զեկույցը: Առաջարկվում է, որպեսզի հաջորդող այլընտրանքային զեկույցներում նշվեն գենդերային հավասարության նոր որակական չափանիշներ: Առաջարկվում է ուսումնական բովանդակության մեջ նվազեցնել գենդերային կարծարտիպերը հենց այս նպատակին հասնելու համար: Հետևաբար, կարելի է պահանջել, որ կառավարության զեկույցում հետագայում գենդերային հավասարության մասին դատողությունները փոխկապակցված լինեն դասագրքերում բովանդակության խտրականության խորքայնության մակարդակի հետ:
- Ձեռնարկել հետազոտությունների շարք, որոնք տնտեսության ու աշխատանքի շուկայի տեսանկյունից կուսումնասիրեն կանանց ներգրավվածության սահմանափակ լինելու սկզբնաղբյուրները:
- Կարելի է նաև հետազոտել ընտանեկան բռնությունների դինամիկայի փոխկապակցվածությունը կանանց

աշխատանքի շուկայում ունեցած սահմանափակ ընտրության ու սեղմված ճկունության արդյունքում:

ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

2-րդ կլոր սեղան-քննարկման վերաբերյալ տրվել է հայտարարություն, և արդյունքները լուսաբանվել են ՀՊՏՀ-ի պաշտոնական ինտերնետային կայքի և Ֆեյսբուքի միջոցով՝

- ՀՊՏՀ պաշտոնական կայք՝ <http://www.asue.am/en/media/news-143/how-to-get-rid-of-stereotypes-and-overcome-discriminatory-approach-round-table-discussion-at-asue-1488>
- Ֆեյսբուք՝ <https://www.facebook.com/243586022364879/photos/a.244663185590496.59504.243586022364879/673784152678395/?type=3&theater>



III կլոր սեղան

Շահակիցների պահանջմունքներին ուսումնառության վերջնարդյունքների համապատասխանության խնդիրները

Մայիսի 30, 2014թ.

Հիմնական բանախոսներ.

Սամվել Պիպոյան, ՄԿՈՒ փորձագետ

Նվարդ Մանասյան, ՏԵՄՊՈՒՍ-ի Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետ

«Շահակիցների պահանջմունքներին ուսումնառության վերջնարդյունքների համապատասխանության խնդիրները» թեմայով երրորդ կլոր սեղան-քննարկումը նվիրված էր ուսումնական վերջարդյունքների հարցերին կրթության 3 մակարդակներում՝ միջնակարգ, նախնական և միջին մասնագիտական, ինչպես նաև՝ ուսումնառության ընթացքում հետազոտությունների և զարգացման գործողություններ պարունակող ասպիրանտուրայի արդիականացում և ինտեգրում:

Քննարկմանը մասնակցեցին շուրջ 40 ներկայացուցիչներ բարձրագույն ուսումնական հաստատություններից, քաղաքականություններ մշակողներ, հետազոտողներ, ուսանողներ և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հրավիրված հիմնական բանախոսները անդրադարձան կրթության ոլորտի խնդիրներին և ներկայացրեցին բարեփոխումների ծրագիրը, դրա կապերը միջին մասնագիտական կրթության մակարդակում կարողությունների զարգացման հետ և ասպիրանտական կրթության արդիականացման կարիքը գիտելիքահեն հասարակության խթանմանը ուղղված, գիտական համակարգի ստեղծման պետական նպատակներին հասնելու համար:

Քաղաքականության հակիրճ ներկայացում

Բոլոր խմբերի համար հավասարապես մատչելի որակյալ կրթությունը ընկած է տնտեսական զարգացման ու ներառական աճի հիմքում: Լինելով նախկինում բացառապես պլանավորված տնտեսության ժառանգորդ, որտեղ հմուտ աշխատուժը ևս կարգավորվում էր, Հայաստանի կրթական համակարգը փորձում է վերագտնել նոր իրավիճակին համարժեք իր առաքելությունը: Այն դեռևս հիմնականում զարգանում է հին տրամաբանության շրջանակներում, մինչդեռ ազատականացված շուկան նոր մարտահրավերներ է գոյացնում կրթական համակարգի համար:

Ժողովրդավարական հասարակության և ազատական շուկայի նոր իրողությունների և կրթական համակարգի անհամապատասխանությունները որոշակի բացասական ազդեցություն են ունենում բարեփոխումների վրա: Վերջերս իրականացված ազգային գնահատման արդյունքները, հետաքրքիր բացահայտումների առիթ հանդիսացան: Ավագ դպրոցի 4111 աշակերտների շրջանում իրականացված հարցումները ցույց տվին, որ քննվածների միայն 41 տոկոսն է առաջադիմում հայոց լեզվից, իսկ մաթեմատիկայից՝ միայն 16 տոկոսը: Ավելին, մաթեմատիկային ու բնագիտությունից միջազգային գնահատումներում մասնակցությունը 2003-08

թվականների ընթացքում արձանագրեց արդյունքների անկում: Այն, ի դեպ, համընկավ կրթական բարեփոխումների իրականացման հատվածի հետ: Այս ամենը առավել կարևորեց ուսումնառության արդյունքների ու աշխատանքի շուկային համարժեք հմտությունների զարգացմանը միտված ծրագրային ու ֆինանսական աջակության կարևորումը:

Համաշխարհային բանկի կողմից մշակված համանման զեկույցը առանձնացրել էր համեմատելի խնդիրներ, որոնց շարքում շեշտադրվում էր «լավ մոտիվացված բարձրակարգ ուսուցիչների առկայությունը դպրոցներում, որոնք, սակայն դժվարությամբ են ներառվում համակարգում, քանի որ աշխատանքի վարձատրությունը բավականին ցածր է, իսկ համակարգը գերբեռնված է: Հետևաբար և առանց տեսլականի կամ ռեսուրսների միջին մասնագիտական կրթության գրավչությունը չի կարող մեծանալ, այն դեռևս շարունակում է մնալ կրթական համակարգի ամենաչբարեփոխված հատվածը, որտեղ որակը անկում է ապրել, իսկ ուսանողները խուսափում են ներգրավվել այս համակարգում՝ նպաստելով համապատասխան մասնագետների անբավարար առաջարկին»:

Բարձրագույն կրթության բազմաթիվ խնդիրները, որոնց թվում նաև հմտությունների անհամապատասխանության արդյունքում գործազրկության առկայությունն է, հնաոճ կրթական ծրագրերից, անհամապատասխան առարկաներից կամ հիմնականում ավանդական մեթոդներից մինչև կառավարման ձևական փոփոխություններ ու պետության անհարկի ներգրավվածություն, համարժեք ֆինանսավորման բացակայության հետ միասին իրենց հիմքում հիմնականում առանձնանում են մարդկային կապիտալի արդիականցման դանդաղությամբ: Համալսարանների պրոֆեսորադասախոսական կազմը զրկված է սեփական

հմտությունները զարգացնելու և ժամանակի համաշխարհային մարտահրավերներին համընթաց ընթանալու հնարավորություննից: Այն հիմնականում պայմանավորված է հիմնարար և կիրառական համալսարանական հետազոտությունների անհամապատասխանությամբ և տարածման խորությամբ: Համալսարաններում հետազոտություններին ու մշակումներին պատշաճ ուշադրություն դարձնելու արդյունքում կարելի է ակնկալել, որ համալսարանի արդիականացումը կարող է նոր որակական զարգացում արձանագրել՝ ծառայելով հասարակության կարիքներին ու բավարարելով շուկայի պահանջները:

Հայտնի է, որ անհավասարության բարձր մակարդակը հանգեցնում է աճի անկմանը: Բնակչության բոլոր հատվածների կարիքները սպասարկող սահմանափակ ռեսուրսների վերաբաշխմանը նպաստող ներառականությունը անհնար է առանց բարձրորակ կրթական համակարգի առկայության, որը հասանելի ու մատչելի է բոլորին անկախ իրենց սոցիալական կարգավիճակից և այլ տարբերակիչներից:

Եզրակացություն և առաջարկություններ

Հանրակրթություն. Ներկա իրավիճակը չի հիմնվում ներառման քաղաքականության վրա, ինչը շեշտակի նվազեցնում համակարգի մասնակիցների՝ տնօրենների, ուսուցիչների, փորձագետների, աշակերտների ներգրավվածությունը հանրակրթական բարեփոխումներում: Հիմնվելով իրավիճակի վերլուծության վրա, առաջարկվում է.

- Վերևից-ներքև բաղադրիչից զատ ակտիվորեն աշխատեցնել մնացած երեք բաղադրիչները,
- Ուսուցիչներին մասնակից դարձնել կրթական

բարեփոխումների բոլոր փուլերում՝ նրանց մոտ ձևավորելով այդ ամենի համար անհրաժեշտ հմտություններ,

- Հավաքել և տարածել հաջողության օրինակները,
- Նվազեցնել գյուղ-քաղաք անհամամասնությունները,
- Դպրոցներում ձևավորել համագործակցային մշակույթ:

Միջին մասնագիտական կրթություն. ՄԿՈՒ ոլորտի բարեփոխումների իրականացման ակնկալվող հիմնական արդյունքներն են հանդիսանալու՝

- ՄԿՈՒ որակավորումների ազգային շրջանակի համադրելիությունը որակավորումների եվրոպական շրջանակի հետ,
- ՄԿՈՒ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի համադրումը միջազգային զարգացումների, մասնավորապես Կոպենհագենյան գործընթացի սկզբունքներին,
- ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման, ինչպես նաև կառավարման արդյունավետության բարձրացումը, այդ թվում ՄԿՈՒ համակարգում ուսուցման իրականացումը կրեդիտային համակարգով և ուսումնական պրակտիկաների և արտադրական ուսուցման կազմակերպումը գործատուների մոտ,
- ՄԿՈՒ ուսումնամեթոդական նյութերի և երաշխավորությունների մշակումը՝ գործատուների ներկայացուցիչների ներգրավմամբ
- ՄԿՈՒ ոլորտի միջազգային զարգացումների մասին իրազեկվածության բարձրացումը,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար ՄԿՈՒ մատչելիության աստիճանի բարձրացումը,

- 12 տարածաշրջանային քոլեջներում կարիերայի զարգացման համար անհրաժեշտ խորհրդատվության տրամադրումը և այլ ծառայությունների մատուցման շրջանակի մեծացումը:

Երրորդ մակարդակի բարձրագույն կրթություն. Վերլուծությունը ցույց է տալիս, որ գիտության ոլորտի 2020 թվականի տեսլականը տվյալ ժամկետում անհրազործելի է թե՛ ինտենսիվ, թե՛ էքստենսիվ մոտեցման դեպքում: Հայաստանի գիտական համակարգը չի կարող մրցել եվրոպական տարածքի հետազոտական հզորությունների հետ: Անգամ եթե պետությունը շեշտակի մեծացնի ֆինանսական հատկացումները, համակարգը իր կադրային ու տեխնիկական, բովանդակային ու կառուցվածքային հզորություններով չի կարող արդյունավետ կառավարել այդ միջոցները: Այդ նպատակով առաջարկվում է՝

- Առաջնորդվել էքստենսիվ զարգացման մոտեցմամբ և երկփուլ մոտեցմամբ արդիականացնել բարձրագույն կրթության երրորդ մակարդակի բովանդակությունն ու կառուցվածքը: Անկախ կրթական ծրագիրը սպասարկող կազմակերպության հարկավոր է համարել տվյալ ոլորտի կրթական վերջնարդյունքները՝ առաջնորդվելով որակավորումների ազգային շրջանակով: Նախապատրաստել այդ ծրագրերի հավատարմագրման գործընթացի հիմքերն ու ապահովել դրանց հետագա միջազգայնացման նախապայմանները:
- Գիտության ոլորտի նյութատեխնիկական բազան և ենթակառուցվածքները արդիականացնելուն միտված ներդրումային ծախսերը փոխկապակցել տվյալ կրթական ծրագրում ներգրավված գիտահետազոտական կադրերի հետազոտական առաջարկների մրցակցային ֆինանսավորման մեխանիզմների փոխկապակցված ապահովման հետ:
- Պետության կողմից ռազմավարական ճանաչված ոլորտների

ուղղությամբ առաջարկվող կրթական ծրագրերի բովանդակային ու կառուցվածքային բարեփոխումներին զուգահեռ, տվյալ ուղղություններով վերանայել ասպիրանտական տեղերի հատկացման քաղաքականությունը:

- Երիտասարդ կադրերի ներհոսքը գիտության ոլորտ, և գիտական ներուժի կառավարելի, սահուն սերնդափոխությունը ապահովելիս առաջնորդվել բարձրագույն կրթության երրորդ մակարդակի կրթական հատվածի խորքային բարեփոխմամբ և հետազոտական մեխանիզմների վերանայմամբ: Կարևոր է ներկառուցել այնպիսի մրցութային մեխանիզմներ, երբ անկախ ինստիտուցիոնալ պատկանելությունից հետազոտական խմբերը ներառեն անհատներ, թե համալսարանական, թե գիտահետազոտական հաստատություններից: Այդպիսով կարելի է աջակցել տարբեր կառույցներում թեմատիկ հետազոտությունների ու գիտահետազոտական անձնակազմի բովանդակային ինտեգրմանը:
- Հիմնարար գիտական հետազոտությունների արդյունավետ պետական հովանավորություն և առաջընթաց զարգացում ապահովելու և գիտակակրթական կազմակերպություններում տնտեսության մեջ օգտագործվող գիտելիքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների իրականացումը, նորամուծությունների և արտոնագրերի ավելացումը խթանելու համար վերանայել գիտահետազոտական աշխատանքի ֆինանսավորման մեխանիզմները: Բարենպաստ մեխանիզմների ձևավորման դեպքում մասնավոր ոլորտում իրականացվող ՀԵՄ-ները չեն շրջանցի գիտակրթական համակարգը և թույլ կտան ձևավորել գիտության, տեխնոլոգիաների և ինովացիա պարունակող գիտելիքների զարգացումն ապահովող ներդաշնակ համակարգի

կայացումը՝ խթանելով մասնավոր բիզնեսի ներգրավումը դեպի գիտություն և ապահովելով այդ գիտելիքների նպատակուղղված ներդրումը կրթության և տնտեսության այս կամ այն ոլորտում:

Գիտության և տեխնոլոգիաների բնագավառում միջազգային համագործակցության ընդլայնման նպատակով կարևորվում է երրորդ մակարդակի կրթության ամբողջական բարեփոխումները, որոնց արդյունքում համալսարանները և կրթական ծրագրեր մատուցող հաստատությունները ակտիվ կհամագործակցեն այլ գիտակրթական համակարգերի ու հետազոտողների հետ: Սա ենթադրում է ֆինանսավորման մեխանիզմների վերանայում, կրթության բովանդակության միջազգայանացում ու գիտական արդյունքի հանրայնացում ու միջազգայանցում:

ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

3-րդ կլոր սեղան-քննարկման վերաբերյալ տրվել է հայտարարություն, և արդյունքները լուսաբանվել են ՀՊՏՀ-ի պաշտոնական ինտերնետային կայքի և Ֆեյսբուքի միջոցով՝

- ՀՊՏՀ պաշտոնական կայք՝ <http://www.asue.am/en/media/news-143/how-to-match-learning-outcomes-with-the-employers-demands-1564>
- Ֆեյսբուք՝ <https://www.facebook.com/243586022364879/photos/a.244663185590496.59504.243586022364879/695256120531198/?type=3&theater>



IV կլոր սեղան

Փոքր և միջին ձեռնարկությունների դերը տնտեսական զարգացման համատեքստում

Օգոստոսի 1, 2014թ.

Հիմնական բանախոսներ՝

Ղևոնդ Բարիկյան, Գիտությունների թեկնածու,
 ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչ
 Մարգարիտ Մարուքյան, ՀՊՏՀ-ի փորձագետ

Չորրորդ կլոր սեղանը նվիրված էր փոքր և միջին ձեռնարկությունների/ՓՄՁ/ ոլորտի զարգացման պետական քաղաքականությանը, այդ քաղաքականության ուժեղ և թույլ կողմերին: ՓՄՁ ոլորտի զարգացումը կարևորվում է աղքատության նվազեցման և ավելի մեծ թվով մարդկանց ձեռներեցության գործում ներգրավելու առումով, որի արդյունքում կապահովվի եկամուտների արդարացի բաշխում և վերաբաշխում:

Քննարկմանը մասնակցեցել են 41 ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչներ, քաղաքականություն մշակողներ, հետազոտողներ, ուսան-

ղներ, տնտեսագետներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլ շահագրգիռ կողմեր:

Քաղաքականության հակիրճ ներկայացում

Փոքր և միջին ձեռնարկատիրության կարևորությունը տնտեսության մեջ պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝ միջին խավի ձևավորմամբ սոցիալական լարվածության թուլացմամբ, մրցակցային միջավայրի ամրապնդմամբ, հասարակության առավել լայն զանգվածներից ֆինանսական ռեսուրսների ներգրավման հնարավորությամբ և այլն: ՓՄՁ ոլորտի զարգացումը ռազմավարական կարևորություն ունի հատկապես փոքր տնտեսություն ունեցող երկրների համար՝ կապված մրցակցային առողջ միջավայրի ձևավորման հետ: Հետևաբար, անհրաժեշտ է պետական նպատակաուղղված ծրագիր և թիրախային աջակցություն ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի զարգացման համար: Այդ աջակցման գործիքներից մեկը հարկային արտոնությունների տրամադրումն է՝ ՓՄՁ ոլորտի համար ավելի շատ ազատ ֆինանսական միջոցներ թողնելու և շրջանառությունը մեծացնելու նպատակով:

Այսպես, հետազոտությունը անդրադարձել է ՓՄՁ-ներին հարկային և վարկային արտոնությունների տրամադրման խնդրին՝ բացահայտելու համար այն հնարավոր զարգացման ուղղությունները, որոնք կարող են գործնական նշանակություն ունենալ ՓՄՁ ոլորտի աջակցության և քաղաքականության մշակման համար:

ՀՀ Կառավարության 2014-2025 թթ. ծրագրում փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծումը և գործունեության ապահովումը սահմանված է որպես տնտեսական գերակայություն: 2014-2025թթ. ծրագրում նախատեսվում է իրականացնել ՓՄՁ ոլորտի զարգացման մի շարք միջացառումների, որոնց արդյունավետության

ցուցիչները, այնուամենայնիվ, հստակ ձևակերպված չեն: Այսպես, ծրագրում նախատեսվում են ՓՄՁ ոլորտի աջակցության հետևյալն միջոցառումները.

1. Պետական վարկային երաշխավորությունների փորձի շարունակությունը և ընդլայնումը այն գործող և սկսնակ ՓՄՁ-ների համար, որոնք ունեն արտահանման, ներմուծման փոխարինման կամ գիտելիքների արտադրության ներուժ՝ գերակայություն տալով մարզերում գործող ձեռնարկություններին:
2. Սկսնակ գործարարության կայացմանն աջակցություն՝ ներառյալ կարողությունների և հմտությունների զարգացման, գործարար պլանավորման և սկսնակ գործարարներին ֆինանսների հասանելիության ապահովման միջոցառումները:
3. Ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովում՝ գրավի կամ դրա իրացվելիության անբավարարության, բարձր ռիսկերի և այլ խոչընդոտների վերացման և կառավարման գործիքների միջոցով:
4. Կրթական և խորհրդատվական աջակցություն՝ հատկապես, եթե շուկայական գործող մեխանիզմները չեն ապահովում դրանք կամ կապված են մեծ տրանսակցիոն ծախսերի հետ: Առանձին ուղղությամբ պետական ծրագրերը միտված կլինեն գործարար ծառայություններ մատուցող ընկերությունների կարողությունների զարգացմանը:
5. Ուղղակի աջակցություն գործող և սկսնակ ՓՄՁ-ներին՝ շուկաների հասանելիության ապահովման, ինչպես նաև տեղեկատվական օգնության նպատակով:
6. Պետական գնումների համակարգի հասանելիության ապահովում ՓՄՁ-ների համար: Վերանայման պետք է

ենթարկվեն պետական գնումների այն ընթացակարգերը, որոնք առանց արդարացի հիմնավորման նպատակի խոչընդոտներ են ստեղծում համապատասխան ոլորտում գործող ՓՄՁ-ների համար:

Նշված քաղաքականության արդյունքում ակնկալվում է տնտեսությունում ՓՄՁ-ների դերի բարձրացում. 2025թ.-ին ՓՄՁ-ների ավելացրած արժեքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կաճի՝ 2012-ի մոտ 40 տոկոսից հասնելով 60 տոկոսի: Նախատեսվում է նաև ՓՄՁ-ների մրցունակությունը բնորոշող հիմնական ցուցանիշի՝ աշխատանքի արտադրողականության աճ 2-3 անգամ:

Վերը նշված ծրագրի համաձայն, անհրաժեշտ է 13 տարի շարունակ ապահովել տարեկան 1.5 տոկոս ՓՄՁ-ների ավելացված արժեքի աճ ՀՆԱ-ում:

Եզրակացություն և առաջարկություններ

- ՓՄՁ ոլորտի հարկային քաղաքականությունը պետք է ուղղված լինի մրցակցային անհավասար պայմանների հաղթահարմանը,
- ՓՄՁ ոլորտի զարգացման խնդիրները կարելի է և անհրաժեշտ է լուծել ոչ միայն հարկային արտոնությունների տրամադրման և վարկային արտոնյալ պայմանների ստեղծմամբ, այլ որակական աճին միտված նախաձեռնություններով,
- Վարկավորման ծավալների աճին զուգահեռ անհրաժեշտ է վերլուծել ՓՄՁ ոլորտում արտադրողականության և շրջանառության աճի դինամիկան՝ ոլորտի ձեռնարկությունների քանակի նվազման վտանգները կանխատեսելու և կանխարգելելու համար:

- ՓՄՁ հանդեպ պետական հարկային քաղաքականության հիմքում պետք է դրվի այն ճախողումների շտկումը, որոնք առաջանում են անկատար շուկայական տնտեսության և ենթակառուցվածքների թերի զարգացման հետևանքով:

ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

4-րդ կլոր սեղան-քննարկման վերաբերյալ տրվել է հայտարարություն, և արդյունքները լուսաբանվել են ՀՊՏՀ-ի պաշտոնական ինտերնետային կայքի և ֆեյսբուքի միջոցով՝

- ՀՊՏՀ պաշտոնական կայք՝ <http://www.asue.am/am/fourth-roundtable-discussion-on-role-of-sme-sector-in-ra-1572>
- Ֆեյսբուք՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=985888194801321&id=243586022364879



V կլոր սեղան

Ֆինանսական համակարգի դերը ներառական աճի խթանման գործընթացում

Սեպտեմբերի 25, 2014թ.

Հիմնական բանախոս՝

Հասմիկ Ղահրամանյան, տնտեսագիտության թեկնածու,

ՀՀ Կենտրոնական բանկ

Հինգերորդ՝ «Ֆինանսական համակարգի դերը ներառական աճի խթանման գործընթացում» թեմայով կլոր սեղան-քննարկումը նվիրված էր ՀՀ ֆինանսական ոլորտի խնդիրներին:

Ֆինանսական բնագավառում հասանելիության բարձրացումը ապահովում է ֆինանսական ոլորտի ներառականությունը, այն խոցելի խմբերին հնարավորություններ է տրամադրում ստանալ և պատասխանատու կերպով օգտագործել ֆինանսական միջոցները, որը տնտեսության զարգացմանը զուգահեռ ապահովում է լրացուցիչ եկամտի հնարավորություն և նպաստում է աղքատության նվազեցմանը:

Հիմնական բանախոսը անդրադարձավ ֆինանսական ոլորտի խնդիրներին, փորձելով բացահայտել թույլ կողմերը և

ներկայացրեց ֆինանսական ոլորտի կարևորությունը ներառական աճի գործընթացում:

Քննարկմանը ակտիվորեն մասնակցեցին միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների, պետական հաստատությունների շահագրգիռ ներկայացուցիչներ, քաղաքականություն մշակողներ, հետազոտողներ, ինչպես նաև ուսանողներ:

Քաղաքականության հակիրճ ներկայացում

Վերջին երկու տասնամյակներում ֆինանսական հատվածի զարգացումն ավելի է կարևորվում տնտեսագետների կողմից՝ որպես տնտեսության զարգացման նախադրյալ: Ֆինանսական ինստիտուտները ստեղծում են միջավայր, որտեղ ձևավորվում են խնայողություններ, իսկ արդյունավետ գործող ֆինանսական համակարգը նպաստում է տնտեսության արտադրողականության աճին՝ տնտեսությունում իրացվելիության օպտիմալ մրցակցային տեղաբաշխման միջոցով:

Այժմ նաև լայնորեն քննարկվում է ֆինանսական համակարգի օպտիմալ վերին սահմանի հարցը. ասվածի վկայությունն է վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամը, որը սկսվեց չափազանց զարգացած ֆինանսական համակարգ ունեցող երկրներից, տարածվեց ամբողջ աշխարհում: Սակայն դեռևս գնահատված չէ շեմային այն մակարդակը, որից այն կողմ ֆինանսական համակարգը կարող է չափից ավելի մեծանալ և խնդրահարույց դառնալ տնտեսական աճի համար:

Ֆինանսական հատվածում պետական քաղաքականությունը Կենտրոնական բանկն իրականացվում է երկու ուղղությամբ՝ դրամավարկային և ֆինանսական կայունության ապահովման միջոցով:

Դրամավարկային կայունությունն ունի հստակ չափանիշ՝

գների կայունության ապահովումը, որի մակարդակը տնտեսական աճի ապահովման տեսանկյունից սահմանվել է տարեկան 4%-ը: Դրամավարկային կայունությունը՝ գնաճի ցածր և կայուն մակարդակը տարիներ շարունակ ՀՀ-ում ապահովել է տնտեսական ակտիվության աճ, որը նաև ներառական է եղել՝ աղքատության կրճատման շնորհիվ:

Եթե դրամավարկային կայունությունն ունի հստակ չափանիշ, ապա ֆինանսական կայունության չափանիշները մի քանիսն են. ֆինանսական համակարգը խափանումից զերծ պահելը, ֆինանսական համակարգի իրացվելիության ապահովումը, գործարքների և փոխանցումների անխափանությունը, խնայողությունների արդյունավետ տեղաբաշխումը:

ՀՀ-ում ֆինանսական կայունության դերը ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում զգալի է եղել ոչ միայն տնտեսական աճի, այլ նաև՝ դրամավարկային կայունության ապահովման համար: Ավանդների և վարկերի աճը շարունակվել է անգամ ճգնաժամի ժամանակահատվածում, որին հետևել է ֆինանսական միջնորդության աճը: Այստեղ Կենտրոնական բանկի քաղաքականությունից բացի էական է եղել նաև Կառավարության դերը՝ տնտեսության տարազանման նպատակի ներքո համակարգաստեղծ, արտահանող ճյուղերին վարկավորման բարենպաստ պայմանների ստեղծմամբ, գյուղատնտեսության ճյուղի ներուժի ավելացման նպատակով այդ ճյուղին տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման քաղաքականությամբ:

Ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության դաշտը շարունակում է պահպանել առաջատար դիրքերը տարածաշրջանում: Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի զարգացման, ֆինանսական համակարգում սպառողների շահերի պաշտպանության

և ֆինանսական գրագիտության մակարդակի հետագա բարձրացման նպատակով նախաձեռնած և ընթացքում գտնվող նախագծերի իրականացումը ֆինանսական ծառայությունների ներթափանցման և ֆինանսական միջնորդության խորացման լրացուցիչ նախադրյալներ է ստեղծում:

Ամփոփելով, հարկ է նշել, որ ֆինանսական զարգացումը առաջ է անցել տնտեսության զարգացման տեմպերից, երբ համադրում ենք ֆինանսական զարգացման աստիճանի և 1 շնչին ընկնող ՀՆԱ-ի դիրքը աշխարհի երկրների հետ:

Իրական և ֆինանսական հատվածների զարգացման մակարդակների նման տարբերության պարագայում ներառական տնտեսական աճի ապահովման համար ֆինանսական զարգացումը չի կարող լինել հիմնական խոչընդոտ՝ անհրաժեշտ են կառուցվածքային փոփոխություններ տնտեսության իրական հատվածում, ինչն էլ հնարավորություն կտա լայն զանգվածներին ներգրավվել տնտեսական գործունեության մեջ: Իհարկե, կարիք կա նաև ֆինանսական հատվածի բարեփոխումների, սակայն ներառական զարգացման հիմնական շեշտը պետք է դնել կառուցվածքային բարեփոխումների, տնտեսական միջավայրի բարելավման վրա:

Եզրակացություն և առաջարկություններ

- Ինստիտուցիոնալ (տեղեկատվական և գործառնական) ծախսերի կրճատումը հնարավորություն է տալիս աղքատներին ձեռք բերել ֆինանսական միջոցներ
- Ներառականացումը կախված է զարգացման շեմային մակարդակից
- Դրամավարկային կայունությունը ՀՀ-ում տվել է դրական արդյունք ներառական աճի տեսակետից
- Ավելի բարձր գնաճի պարագայում կարճաժամկետ

հատվածում գրանցվող բարձր տնտեսական աճը ներառական չէր լինի

- Ֆինանսական կայունությունը ՀՀ-ում նպաստել է դրամավարկային կայունությանը և տնտեսական աճին,
- Անհրաժեշտ է իրականացնել շարունակական կառուցվածքային բարեփոխումներ,
- Անընդհատ իրականացնել ֆինանսական համակարգի վերլուծություն՝ բարելավման ուղղությունների հստակեցման նպատակով,
- Կատարելագործել ֆինանսական համակարգում առկա ռիսկերի գնահատման մեթոդները՝ հիմնվելով միջազգային փորձի վրա,
- Մշակել և ներդնել ֆինանսական կայունության ապահովման և ճգնաժամի կառավարման արդյունավետ համակարգեր,
- Ապահովել հասարակության լայն շերտերի համար ֆինանսական կրթման մի շարք ծրագրեր և դրանով իսկ բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը ֆինանսական ոլորտի վերաբերյալ:

ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

5-րդ կլոր սեղան-քննարկման վերաբերյալ տրվել է հայտարարություն, և արդյունքները լուսաբանվել են ՀՊՏՀ-ի պաշտոնական ինտերնետային կայքի և ֆեյսբուքի միջոցով՝

- ՀՊՏՀ պաշտոնական կայք՝ <http://www.asue.am/en/media/news-143/discussion-on-role-of-financial-system-in-inclusive-growth-process-at-asue-1671>
- Ֆեյսբուք՝ <https://www.facebook.com/243586022364879/photos/a.244663185590496.59504.243586022364879/753725691350907/?type=3&theater>



VI կլոր սեղան

Հայաստանի Հանրապետության ագրարային քաղաքականությունը և միջազգային համագործակցությունը

Փետրվարի 18, 2015թ.

Հիմնական բանախոսներ.

Արմեն Հարությունյան,

ՀՀ Գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Մկրտիչ Այվազյան, Ռազմավարական զարգացման
գործակալության նախագահ

Վեցերորդ կլոր սեղանը նվիրված էր Հայաստանի գյուղատնտեսության ոլորտին և միջազգային համագործակցության հնարավորություններին: Տնտեսական համակարգի անցումը պահանջեց կառուցվածքային կանոնավորման ծրագրեր՝ հիմնված նոր օրենսդրական և կառուցվածքային աջակցության, տնտեսական ազատականացման թիրախների և շուկայամետ բարեփոխումների վրա:

Գյուղատնտեսությունը հանդիսանում է տնտեսական համակարգի հենասյունը, քանի որ բացի սնունդ և հումք մատակարարելուց, այն ապահովում է զբաղվածության

հնարավորություն բնակչության շատ մեծ տոկոսի համար: Բանախոսները նշեցին գյուղատնտեսություն կարևորությունը Հայաստանի տնտեսության համար և այն փաստը, որ պարենային անվտանգությունը գերակայություն է հանդիսանում պետական քաղաքականության ծրագրերի, տնտեսական բարեփոխումների և կայուն գյուղատնտեսության զարգացման համար:

Հիմնական բանախոսները ներկայացրեցին (ա) Հայաստանի Հանրապետությունում ՌԶԳ-ի կողմից իրականացվող գյուղատնտեսության զարգացման ծրագրերը և (բ) ՀՀ Ագրարային քաղաքականությունը և միջազգային համագործակցությունը:

Դեբատում մասնակցեցին ավելի քան 40 պետական և միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների ներկայացուցիչներ, հետազոտողներ, ինչպես նաև՝ ուսանողներ:

Քաղաքականության հակիրճ ներկայացում

Հանրապետության տնտեսության ազատականացումը, հողի և գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցների, արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերք իրացնող և վերամշակող կազմակերպությունների մասնավորեցումը հուսալի նախադրյալներ են ստեղծել գյուղում առկա ներուժի արդյունավետ օգտագործման համար: Այդուհանդերձ, հաշվի առնելով ագրարային ոլորտի առանձնահատկությունները, ագրարային հատվածում ստեղծված իրավիճակը, ծառայած խնդիրների մասշտաբներն ու հրատապությունը, երկրի պարենային անվտանգության և գյուղական տարածքների զարգացման առաջնահերթությունը, կարևորվում է գյուղատնտեսության և գյուղին պետական ակտիվ աջակցությունը: Այն առավելապես ուղղված է ագրարային ոլորտում իրավական հիմքի ձևավորմանը, գյուղատնտեսությունում

տնտեսավարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, գյուղատնտեսության ենթակառուցվածքների զարգացմանը, արտահանման ուղղվածություն ունեցող արտադրության խթանմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, սննդամթերքի անվտանգության և մասնագիտական խորհրդատվության համակարգերի զարգացմանը և այլն:

Ագրարային ոլորտում ուղենիշային փաստաթղթերից են Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը, որում նախանշվում են ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունները և դրանց իրականացումն ապահովող միջոցառումները: Միաժամանակ ռազմավարությամբ սահմանվում են գյուղատնտեսության ոլորտի գերակայությունները:

Ռազմավարության հիմնական խնդիրներն են՝

- 1) Ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարում և հակաճգնաժամային մեխանիզմների ներդրում,
- 2) Ագրարային բարեփոխումների խորացում, գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացում,
- 3) Պարենային ապահովության մակարդակի բարձրացում, սննդամթերքի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովում,
- 4) Տեղական արտադրության գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության բարձրացում, ըստ նպատակահարմարության՝ ներմուծվող պարենամթերքի փոխարինում և արտահանման ուղղվածություն ունեցող

- գյուղատնտեսության զարգացում,
- 5) Գոտիական մասնագիտացում և արտադրության ռացիոնալ տեղաբաշխում,
 - 6) Սննդամթերքի անվտանգության ապահովում,
 - 7) Հողօգտագործման արդյունավետության բարձրացում,
 - 8) Օրգանական գյուղատնտեսության զարգացում,
 - 9) Բուսաբուծության զարգացում.
 - 10) Անասնաբուծության զարգացում.
 - 11) Գյուղատնտեսական հումքի վերամշակում.
 - 12) Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների զարգացում և արտադրության տեխնիկական հագեցվածության բարձրացում,
 - 13) Գյուղի սոցիալական ենթակառուցվածքների զարգացում,
 - 14) Գյուղատնտեսական ռիսկերի մեղմացում,
 - 15) Ագրարային ոլորտի վարկավորման բարելավում,
 - 16) Ագրարային ոլորտի գիտակրթական, խորհրդատվական համակարգի բարելավում,
 - 17) Գյուղատնտեսության հաշվառման համակարգի բարելավում:

Եզրակացություն և առաջարկություններ

- Ելնելով անհրաժեշտությունից կամ ոլորտում առկա խոչընդոտներից՝ առաջարկվել է իրականացնել որոշակի օրենսդրաիրավական բնույթի բարեփոխումներ, այդ թվում՝
 - ✓ Օրգանական գյուղատնտեսության մասին օրենքի փոփոխություն կամ լրամշակում,
 - ✓ Գյուղատնտեսության մասին օրենքի ընդունում,

- ✓ Գյուղատնտեսական կոոպերացիաների մասին օրենքի ընդունում,
- Հայաստանի Հանրապետության ագրարային քաղաքականությունը դեռևս հիմնավոր ձևով չի ներառում ագրովերամշակման և գյուղատնտեսության սպասարկման ոլորտները, ինչի առիթով առաջարկվել է միջազգային համագործակցության մարտահրավեր համարել այս հիմնախնդրի լուծումը,
- Կարևոր գերակայություն է գյուղատնտեսության ապահովագրական համակարգի ներդրումը՝ նախապատվությունը տալով պետական աջակցմամբ առավել մատչելի ապահովագրական կառուցակարգերին,
- Պետական աջակցության գործող ծրագրերի արդյունավետությունը դեռևս ցածր է, անհրաժեշտ է կարևորել դրանց հասցեկանությունը, նյութական միջոցների բաշխման թափանցիկությունը և գնահատել յուրաքանչյուր ծրագրից ակնկալվող արդյունքները,
- Անհրաժեշտ է կարևորել միջազգային համագործակցության տարբեր ծրագրերի համակարգումը՝ նախապատվությունը տալով տեղեկատվական հարթակի ձևավորմանը և վերջինիս շրջանակներում՝ կարևորագույն ծրագրերի պարբերաբար քննարկմանը,
- Անհրաժեշտ է ըստ արշանվույն գնահատել մարդկային կապիտալը և մոտիվացնել,
- Ագրարային ոլորտում իրականացվող մի շարք միջազգային ծրագրերի համակարգման շրջանակներում անհրաժեշտ է առավել օպտիմալացնել ծրագրերի աշխարհագրությունը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ներկայումս ՀՀ ագրարային ոլորտում իրականացվող ծրագրերը

հավասարաչափ չեն բաշխված առանձին մարզերում և տարածաշրջաններում,

- Անհրաժեշտ է նաև մշակել և կիրառել ՀՀ ագրարային ոլորտում իրականացվող միջազգային ծրագրերի մասին համապարփակ տեղեկատվության տարածման մեխանիզմներ,
- Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության հետ կապված անհրաժեշտ է հստակեցնել գյուղմթերքի արտահանման և ներմուծման կառուցակարգերն ու ընթացակարգերը:

ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

6-րդ կլոր սեղան-քննարկման վերաբերյալ տրվել է հայտարարություն, և արդյունքները լուսաբանվել են ՀՊՏՀ-ի պաշտոնական ինտերնետային կայքի և Ֆեյսբուքի միջոցով՝

- ՀՊՏՀ պաշտոնական կայք՝ <http://www.asue.am/en/media/news-143/the-problems-of-ra-agrarian-policy-and-international-cooperation-were-discussed-in-aseu-1903>
- Ֆեյսբուք՝ <https://www.facebook.com/243586022364879/photos/a.244663185590496.59504.243586022364879/835736396483169/?type=3&theater>



VII կլոր սեղան

Ջրոսաշրջության արդյունաբերությունը ՀՀ-ում. զարգացման հեռանկարները և այլընտրանքային լուծումները

Մարտի 11, 2014թ.

Հիմնական բանախոսներ.

Մերի Գրիգորյան, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության
Ջրոսաշրջության և տնտեսական զարգացման
բաժնի պետի տեղակալ

Հասմիկ Համբարձումյան, տնտեսագիտության թեկնածու,
ՀՊՏՀ Ջրոսաշրջության կառավարման ամբիոնի դասախոս

Յոթերորդ կլոր սեղան-քննարկումը նվիրված էր Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության ոլորտի խնդիրներին և զարգացման հեռանկարներին: Հիմնական բանախոսները ներկայացրեցին զբոսաշրջության ոլորտի ազդեցության կարևորությունը երկրի տնտեսության զարգացման վրա, նշելով զբոսաշրջության բազմապատկիչ կառուցակարգը բնակչության եկամուտների ստացման, աշխատատեղերի հիմնման և հարակից ոլորտների զարգացման գործում:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետությունում

զբոսաշրջության ոլորտի հիմնահարցերին, ներկայացվեցին զբոսաշրջության զարգացման պետական քաղաքականությունը և զբոսաշրջության ոլորտի ներկայիս իրավիճակը, ինչպես նաև՝ ոլորտի զարգացման գերակայությունները և առաջարկությունները:

Քննարկմանը մասնակցեցին զբոսաշրջության ոլորտը ներկայացնող 41 մասնակիցներ՝ քաղաքականություն մշակողներ, հետազոտողներ, պրոֆեսորներ, ուսանողներ, տնտեսագետներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլ շահագրգիռ կողմեր:

Քաղաքականության հակիրճ ներկայացում

Զբոսաշրջության զարգացման առաջանցիկ տեմպերը, զբոսաշրջային հոսքերի տարեցտարի ավելացումը, տնտեսական բարգձարկչի էֆեկտը և այլ դրական ազդեցություններ այն գրավիչ են դարձնում ՀՀ-ի նման զարգացող մի շարք երկրների համար՝ որպես տնտեսական կատալիզատորի և համաշխարհային տնտեսական միջավայրին ինտեգրվելու հնարավորության: Սակայն, արդյոք հետխորհրդային տնտեսական համակարգը ունի բավարար կարողություն՝ ապահովելու զբոսաշրջության ոլորտի զարգացումը և արդյոք զբոսաշրջության ոլորտը ունակ է դառնալ ՀՀ տնտեսական վերածննդի շարժիչ ուժերից մեկը: Չնվազեցնելով զբոսաշրջության կարևոր նշանակությունը տնտեսական և սոցիալական հարաբերություններում, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ ՀՀ-ում զբոսաշրջությունը գերակա ճյուղ համարվելուց անգամ տարիներ անց էական ազդեցություն չունի ՀՆԱ-ի ձևավորման, ներդրումների ներգրավման կամ նոր աշխատատեղերի ստեղծման . թե՛ ՀՆԱ-ում, թե՛ օտարերկրյա ընդհանուր և ուղղակի ներդրումներում, թե՛ զբաղվածության համակարգում զբոսաշրջության արդյունաբերության մասնաբաժինը չի հասնում 2%-ի:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ զբոսաշրջությունն օժտված է տնտեսության վրա ոչ միայն ուղղակի, այլև անուղղակի ազդեցության ներուժով: Առաջադրված խնդիրը բացահայտելու համար անհրաժեշտություն է առաջանում վերլուծել ՀՀ-ում զբոսաշրջության թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի ազդեցության աստիճանը, իհարկե հաշվի առնելով տվյալների ամբողջականությունն ու դրանց ընձեռած հնարավորությունները:

Եվ արդեն մի քանի տարի է, ինչ զբոսաշրջությունը Հայաստանի Հանրապետության կառավարությունը հռչակել է որպես տնտեսության զարգացման գերակա ոլորտներից մեկը: Չնայած պետության և մասնավոր հատվածի կողմից ձեռնարկվող քայլերին, այս ոլորտը կարիք է զգում մշտական ուշադրության ու նորարարական մոտեցումների:

Այնուամենայնիվ, իրականացված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման համար առկա են մի շարք խոչընդոտներ, մասնավորապես՝

- ՀՀ ներգնա զբոսաշրջային հոսքերի աճը էական ազդեցություն չունի զբոսաշրջային արտաքին առևտրային հաշվեկշռի վրա: Անկախ ներգնա զբոսաշրջության աճից, կապիտալի ներհոսքը սահմանափակ է:
- Ներգնա զբոսաշրջության արդյունքում ձևավորված եկամուտների մի մասը արտահանվում է՝ ոլորտի սպասարկմանն անհրաժեշտ ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու համար:
- Զբոսաշրջության ոլորտի ազդեցությունը ՀՆԱ-ի վրա դեռ չնչին է, այն դեպքում, երբ կացության և սննդի կազմակերպությունների գործունեության ծավալները աճում են, իսկ զբոսաշրջային կազմակերպությունների առանց այն էլ չնչին ծավալները նվազման միտում ունեն:

- Թե՛ ուղղակի և թե՛ ընդամենը ներդրումներում զբոսաշրջության ոլորտի ենթակառուցվածքներում ներդրումների փոքր տեսակարար կշիռը վկայում է դրանց ներդրումային ցածր գրավչության մասին:

Եզրակացություն և առաջարկություններ

- Նպաստել ներքին զբոսաշրջության զարգացմանը, որի շնորհիվ հնարավոր է կապիտալի արտահոսքի նվազում, ինչն էլ լրացուցիչ խթան է զբոսաշրջային արտաքին հաշվեկշռի բարելավման:
- Լրացուցիչ միջոցառումների կազմակերպմամբ նպաստել զբոսաշրջիկների լրացուցիչ ծախսերին, ինչը հնարավորություն կտա ավելացնել կապիտալի ներհոսքը:
- արտոնյալ պայմաններ սահմանել ներքին արտադրողից ապրանքների և ծառայությունների գնման համար,
- ծառայությունների բազմատեսականացման միջոցով մեծացնել ներքին սպառման տեսակարար կշիռը,
- խթանել ազգային արտադրանքի սպառումը՝ առաջնորդման գործիքների միջոցով:
- առաջարկվող զբոսաշրջային փաթեթների ճկունության ապահովում,
- զբոսաշրջային կազմակերպությունների կողմից առաջարկվող զբոսաշրջային փաթեթների գնային և ոչ գնային առավելությունների սահմանում՝ ներքին և ներգնա զբոսաշրջային փաթեթների իրացման համակարգում,
- կացության ոլորտում գործող կազմակերպությունների լրացուցիչ ծառայությունների ճկուն համակարգի ձևավորում և առաջնորդում,

- զբոսաշրջային անիմացիաների և այլ լրացուցիչ ծառայությունների ներառում զբոսաշրջային փաթեթներում:
- պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում առավել ուշադրություն դարձնել զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման հնարավորություններին, ինչը կնպաստի թե՛ ազգային և թե՛ միջազգային ներդրողներին առավել շահագրգռված լինել ոլորտում իրականացվող ներդրումներով,
- մշակել միջոցառումների ծրագիր զբոսաշրջային ոլորտի ապակենտրոնացման ուղղությամբ՝ հաշվի առնելով Կառավարության կողմից հաստատված զբոսաշրջային կենտրոնների զարգացման ծրագրերն ու դրանց հասանելիության բարձրացման հնարավորությունները,
- շահագրգռել միջազգային տուրօպերատորներին՝ տարածաշրջանային զբոսաշրջության զարգացման և ներդրումների ներգրավման նպատակով: Դրա արդյունքում հնարավոր են նաև ՀՀ զբոսաշրջային շուկայում գործող թույլ զբոսաշրջային կազմակերպությունների միավորումներ և մրցակցության ինտենսիվության բարձրացում:

ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

7-րդ կլոր սեղան-քննարկման վերաբերյալ տրվել է հայտարարություն, և արդյունքները լուսաբանվել են ՀՊՏՀ-ի պաշտոնական ինտերնետային կայքի և Ֆեյսբուքի միջոցով՝

- ՀՊՏՀ պաշտոնական կայք՝ <http://www.asue.am/am/tourism-sector-development-perspectives-and-opportunities-were-discussed-at-asue-1933>
- Ֆեյսբուք՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=846754965381312&id=243586022364879



VIII կլոր սեղան

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ազդեցությունը Հայաստանի ներառական աճի վրա. խոչընդոտներ և մարտահրավերներ

Հունիսի 23, 2015թ.

Հիմնական բանախոսներ.

Բագրատ Ենգիբարյան, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի տնօրեն

Սևակ Հովհաննիսյան, “EV Consulting” ՓԲԸ հանրային խորհրդատվության ղեկավար

Կարեն Վարդանյան՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության գործադիր տնօրեն

«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ազդեցությունը Հայաստանի ներառական աճի վրա. խոչընդոտներ և մարտահրավերներ» վերնագրով ութերորդ կլոր սեղան-քննարկումը նվիրված էր Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին: Տարբեր տեսանկյուններից ներկայացվեցին ոլորտի խնդիրներն ու հնարավորությունները: Քննարկվեցին տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հիմնական մակրոտնտեսական

չափորոշիչները, մրցակցային առավելությունները, օրենսդրական դաշտը, Կառավարության որոշումները, ակադեմիական միջավայրը և բարձրագույն ուսումնական հաստատությունների և մասնավոր հատվածի ընկերությունների միջև համագործակցության հնարավորությունները: Կլոր սեղանի քննարկման ընթացքում հիմնական բանախոսների կողմից ներկայացվեցին հետևյալ թեմաները. “Տեխնոլոգիական ոլորտի վերջին զարգացումները՝ խոչընդոտները և խնդիրները” և “Աշխատաշուկայի համար աշխատողներ պատրաստելու համար պահանջվող կրթական բարեփոխումները և ուսուցումը”:

Քննարկմանը մասնակցեցին 50 ներկայացուցիչներ բարձրագույն ուսումնական հաստատություններից, ՏՏ մասնավոր ընկերություններից, գործատուներ, հետազոտողներ, ուսանողներ, միջազգային կազմակերպությունների և ՀԿ-ների ներկայացուցիչներ և այլ շահագրգիռ կողմեր:

Քաղաքականության հակիրճ ներկայացում

Համաշխարհային տնտեսության աճի արագ տեմպերը վերջին տասնամյակում պայմանավորված են տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների բնագավառում կատարված նորամուծություններով և տարբեր արդյունաբերական ճյուղերում դրանց կիրառմամբ: Դեռևս Խորհրդային Միության իշխանության տարիներին լինելով ծրագրային ապահովման մշակման, արդյունաբերական հաշվարկման, էլեկտրոնիկայի, կիսահաղորդիչների արտադրության կենտրոն և պահպանելով տեխնոլոգիական ոլորտում զարգացման մեծ ներուժը, Հայաստանը շարունակում է տարածաշրջանում առաջատար դիրքեր զբաղեցնել տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում, ինչը պայմանավորված է իր բավականին բարձր մրցակցային ներուժ

ունեցող աշխատուժով, ՀՆԱ-ում ունեցած իր մասնաբաժնով, ինչպես նաև ընկերությունների թվի ու ընդհանուր շրջանառության աճի տեմպերով:

Ընդհանուր ոլորտի շրջանառությունը, որը կազմված է ծրագրային ապահովման և ինտերնետ ծառայությունների ոլորտներից, հասել է 474.9 ԱՄԴ ինչը համապատասխանում է 25.2% աճի 2013-ի համեմատ:

Հայաստանում մրցակցային բարձր առավելություններ ունեցող տեխնիկական աշխատուժի շնորհիվ ՏՀՏ խոշոր ընկերությունների և վերագգային կազմակերպությունների համար նպաստավոր ու շահավետ ներդրումային պայմաններ են ապահովվում: Հայաստանյան ՏՀՏ ընկերությունների հիմնական մասնագիտացումներն են՝ ներկառուցված ծրագրային ապահովման մշակումը և կիսահաղորդիչների նախագծումը, ծրագրային ապահովման պատվերները և արտապատվիրումը, ֆինանսական ծրագրերի մշակումը, մուլտիմեդիային նախագծումը, վեբ ծրագրավորումը, տեղեկատվական համակարգերը և համակարգերի ինտեգրումը: Հայաստանը լուրջ նվաճումներով առանձնանում է հատկապես կիսահաղորդիչների նախագծման ծրագրերի և դրանց հարակից մտավոր սեփականության օբյեկտների ստեղծման բնագավառում:

Ներկայումս Հայաստանում գործում են 400 ՏՀՏ ընկերություններ, որոնց մեծամասնությունը տեղակայված է Երևանում, այնուամենայնիվ, մարզային զարգացման ծրագրերի շրջանակում կրթական և գործարար ենթակառուցվածքների զարգացման շնորհիվ գործող ընկերությունների թիվը տարեցտարի աճում է ՀՀ այլ մարզերում, հատկապես Շիրակի և Լոռու մարզերում:

Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտությունն իրականացվում է 2002թ-ից: Հետազոտությամբ նպատակ է դրվում հետևել

ՏՀՏ ոլորտում արձանագրվող զարգացմանը և անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել՝ ուղղված վերհանված խնդիրների կարգավորմանը:

Այսօր հայաստանյան ՏՏ ընկերությունները կարող են առաջարկել միջազգային բարձր ստանդարտներին համապատասխանող արտադրանք ու ծառայություններ: Սակայն դեռևս կան որոշակի խնդիրներ արտաքին շուկաներ դուրս գալու և ՏՏ ոլորտի համար մասնագետներ պատրաստելու հարցում: Այս տեսանկյունից կարևոր է կառավարության կողմից խրախուսման քաղաքականության և շարունակական աջակցման ծրագրերի իրականացումը:

Չնայած տեղական ընկերությունների կողմից կադրերի վերապատրաստումը համարվում է իրենց զարգացման կարևորագույն բաղադրիչ՝ նրանցից քչերն են ի վիճակի ապահովել աշխատակիցների շարունակական վերապատրաստման գործընթացը: Այս հարցում մեծ դեր է խաղում անհրաժեշտ միջոցների ու համապատասխան անձնակազմի առկայությունը: Շատ ընկերություններում ԲՈՒՀ-երի նոր շրջանավարտներն անցնում են չվարձատրվող աշխատանքային պրակտիկա: Ընդունված է, որ պրակտիկա անցնողները նախ վերապատրաստվում են, ընդգրկվում են ընկերության ոչ առաջնային գործունեության մեջ, այնուհետև նրանցից լավագույններն ընտրվում են մշտական աշխատանքի: Նորեկ աշխատողները սովորաբար աշխատանքի են անցնում միայն երկուսից ավելի ամիս անց:

Հաջորդ հիմնական ենթախնդիրը որակական փոփոխություններն են, միայն կադրերի առկայությունը բավարար չէ, քանի որ դաշտում անհրաժեշտություն կա որակյալ նոր մարտահրավերների, ստեղծագործ, մտածող մասնագետների ձևավորման: Բուհում անհրաժեշտ է ստեղծագործ միջավայր ձևավորել, որպեսզի մարդ աշխատանքի անցնելիս պատրաստ լինի ստեղծագործելու՝

առավել ևս տեխնոլոգիական ոլորտում:

Հաջորդ խոչընդոտը ձեռներեցությունն է. ունենք մեծաքանակ մասնագետներ, ովքեր որակյալ աշխատանք են կատարում, բայց քիչ են ձեռներեցները, ովքեր պատրաստ են սեփական բիզնեսը հիմնելու, թիմ ղեկավարելու, որոշակի խնդիրներ լուծելու:

Եզրակացություն և առաջարկություններ

Ընդհանուր առմամբ Հայաստանի SS ոլորտը ունի արտահանման հսկայական ներուժ և որպես այդպիսին կարող է մեծ ներդրում ունենալ Հայաստանի տնտեսության աճի ու զարգացման գործում: Քննարկման արդյունքում առաջարկությունները արվեցին հիմնականում մասնավոր և կրթական հատվածի համագործակցության վերաբերյալ, մասնավորապես.

- Փոփոխությունների իրականացումը պետք է լինի երկուստեք: Ցանկալի է ապահովել մասնավոր հատվածի հետ համալսարանների ավելի սերտ համագործակցությունը՝ նրանց մասնակցությամբ կրթական ծրագրերի իրականացման նպատակով: Ըստ էության, բուհական համակարգը պատրաստակամ է փոփոխությունների և SS ոլորտի կազմակերպություններն էլ պետք է մշակույթ ունենան մասնակցելու այդ փոփոխությունների,
- Բարձրագույն կրթության համակարգում այս ոլորտի մասնագետների պատրաստման համար ավելացնել պետական պատվերով հատկացվող տեղերի թիվը պետության կողմից, որը շահավետ ներդրում է հետագա զարգացման տեսանկյունից,
- SS ոլորտի առավել շատ պրակտիկ մասնագետներ ներգրավել կրթության գործընթացում՝ դասավանդման և

- կրթական ծրագրերի կազմման համար,
- Ստեղծել վերապատրաստման կենտրոններ և իրականացնել վերապատրաստումներ՝ ոլորտի մասնագետների համար,
 - Ակտիվ պրոպագանդա վարել ավագ դպրոցներում՝ ճարտարագիտական մասնագիտությունների համար, քանի որ, ըստ էության, մասնագետների նկատմամբ պահանջարկը գերազանցում է շրջանավարտների թիվը,
 - Ոլորտում իրականացվող բարեփոխումներն սկսել դպրոցներից: Քանի որ նման փորձառություն արդեն առկա է, և որոշ դպրոցներում կան ռոբոտաշինության խմբակներ:
 - Վերանայել երկրորդ մակարդակի կրթությունը՝ ներդնելով 1 տարվա պրակտիկա կամ ուսումնական պլանով չնախատեսված պրակտիկա՝ ուսումնառության ընթացքում,
 - Համալսարաններում ունենալ ձեռնարկությունների հետ համագործակցության խորուրդ,
 - Ստեղծել համագործակցային ծրագրեր արտասահմանյան համալսարանների հետ՝ առավել մրցունակ մասնագետներ պատրաստելու նպատակով:

ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

8-րդ կլոր սեղան-քննարկման վերաբերյալ տրվել է հայտարարություն, և արդյունքները լուսաբանվել են ՀՊՏՀ-ի պաշտոնական ինտերնետային կայքի և ֆեյսբուքի միջոցով՝

- ՀՊՏՀ պաշտոնական կայք՝ <http://www.asue.am/en/media/news-143/correct-orbit-and-principles-of-education-for-it-industry-discussions-of-inclusive-growth-2109>
- Ֆեյսբուք՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=912038088852999&id=243586022364879



IX կլոր սեղան

Մրցակցային միջավայրի, արտահանման և ներմուծման ազդեցությունը ՀՀ տնտեսության ներառական աճի վրա

Օգոստոսի 6, 2015թ.

Հիմնական բանախոսներ.

Գրիգոր Նազարյան, գիտությունների թեկնածու, ՀՊՏՀ-ի Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ

Դավիթ Հախվերդյան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Իներորդ հանդիպումը նվիրված էր Հայաստանի Հանրապետությունում մրցակցային միջավայրի քննարկմանը: Հրավիրված հիմնական բանախոսները ներկայացրեցին Հայաստանի Հանրապետությունում մրցակցային միջավայրը և մրցակցությունը, երկրի արտահանման և ներմուծման հետ կապված հիմնական հնարավորությունները և խնդիրները, և զարգացման հեռանկարները:

Քննարկմանը մասնակցեցին պետական հաստատությունների,

նախարարությունների ներկայացուցիչներ, քաղաքականություն մշակողներ, հետազոտողներ և պրոֆեսորներ, ուսանողներ և այլ շահագրգիռ կողմեր:

Քաղաքականության հակիրճ ներկայացում

Ժամանակակից համաշխարհային տնտեսությունը կրում է խորքային փոփոխություններ, ընդ որում, եթե 1970-ական թթ. մրցակցությունն առանձին տարածաշրջաններում և երկրներում արտահայտիչ չէր, ապա այսօր մրցակցությունը դուրս է եկել «ազգային սահմաններից»:

Մասնավորապես, մշտական նորարարությունը, առավել մրցունակ ճյուղերի ու ոլորտների աննախադեպ աճը զարգացած և նոր արդյունաբերական երկրներում պայմանավորված են ներքին և միջազգային մրցունակությամբ: Ժամանակակից համաշխարհային տնտեսության գլոբալացումը առավել մեծ չափով է պայմանավորում ազգային տնտեսության զարգացումը: Դրան համապատասխան՝ երկրի իրավահավասար և ներդաշնակ ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը հնարավոր կլինի միայն նրա համարժեք մրցունակության դեպքում: Երկրի մրցունակությունը տնտեսական զարգացման առկա վիճակի և հեռանկարների ամփոփ ցուցանիշ է, որը պայմանավորում է երկրի մասնակցությունն աշխատանքի միջազգային բաժանմանը, հանդես գալիս՝ որպես տնտեսական անվտանգության և բնակչության կենսամակարդակի երաշխիք: Մրցունակության համեմատական գնահատականներով հնարավոր է պարզել համաշխարհային տնտեսությունում ազգային տնտեսավարողների թույլ և ուժեղ կողմերը, ճշգրտել տնտեսական զարգացման ուղենիշները:

ՀՀ անկախացման տարիներից սկսած ՀՀ տնտեսության կարևորագույն խնդիրներից են արտահանման խթանումը,

դիվերսիֆիկացումը և արտաքին առևտրի բացասական հաշվեկշռի կրճատումը: Հարկ է նշել, որ թեպետ այս խնդիրները միշտ էլ եղել են ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում, սակայն այդպես էլ արդյունավետ լուծում չեն ստացել: Մասնավորապես, Հայաստանը վերջին տարիներին աննշան մասնակցություն է ունեցել միջազգային առևտրին, արտահանումը չի աճել տնտեսական աճին զուգընթաց, ներմուծումն արտահանման համեմատ ունեցել է առաջանցիկ տեմպեր, ՀՀ արտաքին առևտրային հաշվեկշռի բացասական հաշվեմնացորդը պարբերաբար մեծացել է, ինչը պայմանավորված է ՀՀ՝ գլոբալ շուկայում ցածր գրավչությամբ, տրանսպորտա-կոմունիկացիոն խնդիրներով, տնտեսության փոքր ծավալով, արտահանումը խթանելու ծրագրերի ոչ բավարար արդյունավետությամբ և օբյեկտիվ ու սուբյեկտիվ այլ պատճառներով: Երկրների ֆինանսատնտեսական կապերի խորացումը, ազգային տնտեսությունների բացությունը, փոխլրացումն ու սերտաճումը պայմանավորում են ՀՀ ռազմավարական կողմնորոշումը՝ մուտք գործել համաշխարհային տնտեսություն ոչ որպես հումքային «կցորդ», այլ որպես տեխնոլոգիական զարգացման բարձր մակարդակով, ֆինանսական ուժեղ ինստիտուտներով, զարգացած ենթակառուցվածքներով և տեղեկատվական շտեմարանով երկիր:

Հայաստանի տնտեսության մասնավոր հատվածում առկա հիմնախնդիրները հետևյալն են.

- կոռուպցիան, հարկային վարչարարությունը, հարկային դրույքաչափերը, կառավարչական բյուրոկրատիայի անարդյունավետությունը, աշխատողների որակավորման ցածր մակարդակը,
- մասնավոր հատվածի վերափոխման տեմպերի դանդաղ ընթացքը,

- գործատու-աշխատող հարաբերություններում կոռպորացիայի ցածր մակարդակը,
- աշխատավարձի և արտադրողականության ցածր մակարդակը,
- աշխատավարձի սահմանման ճկունության ցածր մակարդակը,
- կորպորատիվ կառավարումը,
- անձնակազմի վերապատրաստման և որակավորման ցածր մակարդակը,
- մարքեթինգի՝ որպես գործարարության զարգացման արդյունավետ գործիքի կիրառման անարդյունավետությունը,
- հետազոտությունների և մշակումների վրա կատարվող ցածր ծախսերը,
- նորարարությունների և տեխնոլոգիական պատրաստվածության ցածր մակարդակն է:

Եզրակացություն և առաջարկություններ

- ՀՀ տնտեսության զարգացման ներկայիս փուլում սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման հիմնուղին ազգային տնտեսության մրցունակության բարձրացումն է, որի ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են նորամուծությունների և առաջավոր տեխնոլոգիաների կիրառումը, մարդկային կապիտալի խրախուսումը և գիտակթական պայմանների ստեղծումը: Հետևաբար, խիստ արդիական են դառնում բուհական ոլորտի մրցունակության բարձրացման հիմնահարցերը, քանի որ կրթության և բարձրորակ մասնագետների պատրաստման ու որակավորման բարձրացման հիմնական օղակը բուհն է,

որը տնտեսությանն ապահովում է բարձրակարգ մասնագիտական կադրերով:

- Ազգային տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ է նաև բացահայտել տնտեսության այն ոլորտները, որտեղ կատարված ներդրումները կարդարացնեն իրենց և կապահովեն ծախսերի հետզնում: Այս խնդրի լուծման համար առաջնահերթ նշանակություն ունի պետական և մասնավոր հատվածների հնարավորությունների և ռեսուրսների միավորումն ու դրա հիման վրա համագործակցության ապահովումը:
- Մրցունակության կատարողականի բարելավման ուղիներից մեկը ՀՀ արտահանման աճն է: Ընդ որում, դա պետք է տեղի ունենա ոչ թե հանքահումքային ապրանքների արտահանման աճի հաշվին, ինչպես դա տեղի է ունենում ներկայումս, այլ բարձր ավելացված արժեք ունեցող, գիտատար ապրանքների արտահանման հաշվին, որն էականորեն չի տուժում ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ, ինչպես դա տեղի է ունենում հանքահումքային ապրանքների արտահանումից կախվածության մեջ գտնվող երկրների դեպքում, երբ այդ ապրանքների համաշարհային գները կտրուկ ընկնում են, հետևաբար անկում է գրանցում նաև արտահանումը արժեքային արտահայտությամբ:
- ՀՀ-ի արտահանման հնարավորությունների ընդլայնման տեսակետից արդիական և բավականաչափ իրատեսական է բարձրագույն կրթության և դրան հարակից ճյուղերի զարգացումը և դրա հիման վրա տեղեկատվական հեռահաղորդակցման տեխնոլոգիաների զարգացումը, բարձր տեխնոլոգիական և գիտատար ապրանքների արտադրությունը և դրանց արտահանումը, քանի որ նման

ապրանքների արտահանումը էականորեն չի տուժում ճգնաժամային իրավիճակներում, ինչպես դա տեղի է ունենում հումքային ապրանքների արտահանումից կախված լինելու դեպքում:

- ՀՀ-ն ունի մի շարք մրցակցային առավելություններ այս ոլորտում, որոնք կարելի է օգտագործել այս ոլորտը զարգացնելու համար՝
 - էժան աշխատուժը և ցածր գործառնական ծախսերը,
 - օտար լեզվի տիրապետող և համապատասխան մասնագիտական գիտելիքներով օժտված երիտասարդ մասնագետներ,
 - ինֆորմատիկայի, ֆիզիկայի և մաթեմատիկայի ոլորտներում միջազգային չափանիշներին համապատասխանող գիտահետազոտական ներուժի առկայությունը,
 - պետության կողմից աջակցությունը այս ոլորտին (ՀՀ կառավարությունը այս ոլորտը սահմանել է որպես զարգացման գերակա ուղղություն),
 - միջազգային խոշոր ընկերությունների հետ համագործակցության մեծ փորձը:
- ՀՀ-ն ավելի մեծ ներդրումներ պետք է կատարի կրթության, գիտության, հետազոտությունների ոլորտներում և, առհասարակ, մարդկային կապիտալում: Սա այն ոլորտն է, որը կապահովի ծախսերի հետգնում որոշակի ժամանակահատվածի ընթացքում և թույլ կտա երկրում բարձրացնել նորամուծությունների և նորարարությունների մակարդակը, որը բավականաչափ ցածր է մեր երկրում: Անհրաժեշտ է նաև խթանել մրցակցությունը Հայաստանի շուկայում, ինչը կստիպի ընկերություններին ներդնել

նորագույն տեխնոլոգիաներ, որի արդյունքում կբարձրանա տեխնոլոգիական պատրաստվածության մակարդակը: Հենց տեխնոլոգիական հետամնացությունն է, որ պայմանավորում է ՀՀ շուկայում ապրանքների բարձր գները, քանի որ նոր տեխնոլոգիաների ներդրումը թույլ կտա իջեցնել արտադրական ծախսերը, հետևաբար նաև ապրանքների ինքնարժեքը:

ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

9-րդ կլոր սեղան-քննարկման վերաբերյալ տրվել է հայտարարություն, և արդյունքները լուսաբանվել են ՀՊՏՀ-ի պաշտոնական ինտերնետային կայքի և Ֆեյսբուքի միջոցով՝

- ՀՊՏՀ պաշտոնական կայք՝ <http://www.asue.am/en/media/news-143/the-impact-of-competitive-environment-on-the-inclusive-economic-growth-discussion-at-asue-2136>
- Ֆեյսբուք՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=934703063253168&id=243586022364879



X կյր սեղան

Դատաիրավական գործընթացներ և հանրային վստահություն

14 օգոստոսի, 2015թ.

Հիմնական բանախոսներ.

Վարազդատ Հովհաննիսյան, գիտությունների թեկնածու, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան
Արամ Ստեփանյան, ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Գեոդեզիա և քարտեզագրության» ՊՈԱԿ-ի Երկրատեղեկատվության բաժնի պետ

Տասներորդ «Դատաիրավական գործընթացներ և հանրային վստահություն» թեմայով կյր սեղան-քննարկումը նվիրված էր էքսպրոպրիացիայի ինստիտուտի խնդրին, այդ ինստիտուտի գործունեության ոլորտներին և կիրառման ընթացքին: Քննարկման հիմնական նպատակն էր բացահայտել ոլորտում առկա խնդիրները, հիմնվելով իրական դեպքերի վերլուծության վրա, և լուծումներ առաջարկել Հայաստանի Հանրապետությունում էքսպրոպրիացիայի ինստիտուտի հետագա զարգացման համար: Քննարկվեցին

էքսպրոպրիացիայի արդյունքում առաջացող սոցիալական ցնցումների և դրանցից խուսափելու հարցերը: Ներկայացվեցին և քննարկվեցին նաև Հայաստանում էքսպրոպրիացիայի ինստիտուտի ստեղծման պատմությունը, խնդիրները, դժվարությունները և զարգացման հիմնական ուղղությունները: Քննարկումների արդյունքում բացահայտվեցին և առաջարկվեցին որոշ ինստիտուցիոնալ, կարգավորիչ և օրենսդրական բարեփոխումներ:

Քննարկմանը մասնակցեցին հետազոտողներ, փորձագետներ, միջազգային կազմակերպությունների և ՀԿ-ների ներկայացուցիչներ, ինչպես նաև՝ առաջին էքսպրոպրիացիայի գործողությունների մասնակիցներ և այլ շահակիցներ:

Քաղաքականության հակիրճ ներկայացում

Անցումը շուկայական տնտեսության հանգեցրել է մեծ փոփոխությունների: Շուկայական տնտեսությունը ենթադրում է գույքային հարաբերությունների վերափոխում, մրցակցության զարգացում և շուկայական ենթակառուցվածքների ստեղծում: Նման պայմաններում հատուկ ուշադրություն է դարձվում այն ոլորտների զարգացմանը, որոնց առկայությունը վճռական նախապայման է ամբողջ տնտեսական համակարգի բարելավման և կայացման համար: Այդ ոլորտներից մեկը օտարման ինստիտուտի՝ էքսպրոպրիացիայի զարգացումն է:

էքսպրոպրիացիան կամ այլ խոսքերով պետական կամ հանրային կարիքների համար գույքի հարկադիր ձեռք բերումը սոցիալական նոր երևույթ է Հայաստանի համար: Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի տարբեր տեսակների ներմուծումը Հայաստանի սոցիալական կյանք իրականացվեց 1991թ.:

էքսպրոպրիացիայի առաջին դեպքերը գրանցվեցին 2000-2001 թվականներին, երբ Հայաստանի կառավարությունը Երևանի

կենտրոնը վերակառուցելու համար «Հյուսիսային պողոտայի» կառուցման հսկայական կառուցապատման ծրագիր սկսեց իրականացնել:

Էքսպրոպրիացիայի գործընթացը ժամանակակից Հայաստանի հասարակական կյանքում առաջացրեց մեծ սոցիալական ռեզոնանս և առկա է մեծ հասարակական հետաքրքրություն այս գործընթացի նկատմամբ, որի ապացույցն են էքսպրոպրիացիայի ենթարկված գույքի սեփականատերերի կողմից կազմակերպվող բողոքի պարբերական գործողությունները և ցույցերը: Այս մարդկանց մեծ մասը, ընդհանուր առմամբ, դեմ չէ էքսպրոպրիացիայի գործընթացին: Նրանք բողոքում են էքսպրոպրիացիայի իրականացման գործընթացի և էքսպրոպրիացիայի ենթարկված գույքի դիմաց արդարացի փոխհատուցման համար: Ինչպես ցույց են տալիս վերլուծությունները, առկա են էքսպրոպրիացիայի հետ կապված մի շարք խնդիրներ:

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է, որ օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից 15 տոկոս ավելի գումարը: Անտեսվում է այն հանգամանքը, որ անշարժ գույքի օտարման գոտիներում բաց շուկայական արժեք ձևավորվել չի կարող: Արդարացի չի կարելի համարել շուկայական արժեք սահմանելը, քանի որ այս դեպքում հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ օտարումը կատարվում է սեփականատիրոջ կամքին հակառակ:

Բացի այդ, թեև «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի համաձայն օտարվող սեփականության սեփականատերը կամ օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներն իրավունք ունեն պատշաճ ձևով գրավոր առարկություններ կամ առաջարկություններ ներկայացնել օտարման պայմանագրի

նախագծի վերաբերյալ, իսկ ձեռք բերողն իրավունք ունի պայմանագիրը կնքելու նպատակով բանակցություններ վարել օտարվող սեփականության սեփականատիրոջ և օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողների հետ, սակայն ձեռք բերողները, ըստ դիմումատուների, իրենց ներկայացրած առարկությունները չեն ընդունում և հրաժարվում են բանակցություններ վարել փոխհատուցման գնի շուրջ՝ պատճառաբանելով, որ իրենք միայն կառուցապատողներ են:

Պետությունը սահմանափակվում է միայն տարածքի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելով, իսկ օտարված գոտիներում գտնվող գույքի սեփականատերերի նկատմամբ պարտավորությունների կատարումը լիովին թողնված է օտարվող սեփականությունը ձեռք բերող կազմակերպություններին, որոնց գործունեության համար պետությունը որևէ պատասխանատվություն չի կրում և որևէ կերպ չի վերահսկում հետագա գործընթացը:

Ըստ էության, հասարակության գոյության և զարգացման միակ հնարավոր ուղին հասարակական և մասնավոր շահերի համաձայնեցումն է ու հաշտեցումը: Բայց կյանքում մենք նկատում ենք, որ այդ երկու ուղղությունների միջև հավասարակշռություն գտնելը բավականին դժվար է և հասարակությունը սովորաբար թեքվում է մեկի կամ մյուսի կողմը:

Եզրակացություն և առաջարկություններ

- Խուսափելու համար էքսպրոպրիացիայի գործընթացի հետևանքով առաջացող սոցիալական մեծ ցնցումներից ՀՀ Կառավարությունը պետք է գիտակցի, որ էքսպրոպրիացիայի ինստիտուտի հիմքը, հանրային շահերը մասնավոր անձանց շահերից վեր դասելու գաղափարն է: Հասարակությունը ինքն իրենով գոյություն չունի, այն գոյություն ունի հանուն իր կազմի մեջ մտնող անհատների: Հասարակության մեջ

կյանքի պայմանները պետք է լինեն հարմար և բարենպաստ հասարակության յուրաքանչյուր անդամի համար, հետևաբար հասարակական շահը հասարակության անդամների անհատական շահերի ամբողջությունն է: Բայց, երբեմն անհատների շահերը հակադրվում են միմյանց և կարող են հակադրվել հանրային շահերին: Այստեղից էլ առաջանում է այն ընդհանուր կանոնը, որ հանրային և մասնավոր շահերի բախման դեպքում վերջիններս, որպես պակաս կարևոր, զիջում են հասարակական շահերին: Ցավոք այս կանոնը չի կարգավորում բոլոր անհամաձայնությունները: Ակնհայտ է, հասարակության գոյության և զարգացման միակ հնարավոր ուղին հասարակական և մասնավոր շահերի համաձայնեցումն է ու հաշտեցումը:

- Քանի որ էքսպրոպրիացիան մեր երկրում նոր երևույթ է և գտնվում է իր զարգացման և կայունացման փուլում, առաջարկվեց օգտագործել զարգացած երկրների էքսպրոպրիացիայի ոլորտում առկա ձեռքբերումները և փորձը:
- Էքսպրոպրիացիայի կիրառման դեպքում անհրաժեշտ է, որ էքսպրոպրիացիայի նպատակները որոշվեն ոչ թե հատուկ օրենքով, այլ այդ հարցը ունենա շատ մեծ հանրային քննարկում, պարզելու համար, արդյո՞ք էքսպրոպրիացիայի կիրառումը բխում է հանրային շահերից և ո՞րն է այդ հանրային գերակա շահը:
- Պետությունը պետք է միտված լինի օրենսդրական փոփոխությունների իրականացմանը, որպեսզի էքսպրոպրիացիայի գործընթացը լինի հնարավորինս արդարացված:
- Օտարվող սեփականության փոխհատուցման չափը որոշելիս շուկայական արժեքին զուգահեռ անհրաժեշտ է կիրառել նաև այլ չափանիշներ, օրինակ՝ սեփականատիրոջ

համար նույնանման պայմաններ այլ վայրում ապահովելու հնարավորությունը:

- Օրենքում պետք է հստակեցնել շուկայական արժեքի որոշման կարգն ու պայմանները: Քանի որ բոլոր դեպքերում անշարժ գույքի գնահատումը կատարվելու է լիցենզավորված գնահատողի միջոցով, իսկ լիցենզավորում է կատարել պետական մարմինը, ապա գնահատողին հրավիրելու իրավունքը ճիշտ կլինի վերապահել օտարվող անշարժ գույքի սեփականատիրոջը՝ գնահատման ծախսերը թողնելով պետության վրա:
- Հասարակության և պետության կարիքի կրողը պետք է լինի պետությունը, այլ ոչ թե համայնքը կամ կազմակերպությունը: Պետությունը կարող է այդ նպատակի իրականացումը հանձնարարել կազմակերպությանը և նույնիսկ ֆիզիկական անձին, որոնք, չեն կարող լինել սեփականության օտարման գործընթացի մասնակիցներ: Օտարվող գույքի սեփականատիրոջ և այլ գույքային իրավունք ունեցողների իրավունքները չեն կարող լիարժեք պաշտպանված լինել, եթե օտարման պայմանագրի կողմը պետությունը չէ:

ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

10-րդ կլոր սեղան-քննարկման վերաբերյալ տրվել է հայտարարություն, և արդյունքները լուսաբանվել են ՀՊՏՀ-ի պաշտոնական ինտերնետային կայքի և Ֆեյսբուքի միջոցով՝

- ՀՊՏՀ պաշտոնական կայք՝ <http://www.asue.am/en/media/news-143/judicial-processes-discussion-of-issues-of-public-confidence-in-asue-2139>
- Ֆեյսբուք՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=940246796032128&id=243586022364879

Scale 70x100 1/16:
Paper – offset. Publishing – offset. 9.5 print media.
Quantity - 370:

Չափսը 70x100 1/16:
Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ: 9.5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 370:

Published by “Geomapis” LLC.
Տպագրված է «Գեոմափիս» ՍՊԸ-ի կողմից



<http://www.geomapis.com>
E-mail: info@geomapis.com